

A I 2036

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՅ ՀԱՅՈՅ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ

91. 99 ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

Ա

Ա.

Դեռ մանուկ էի երբ հայրս կարին քաղաքէն իւր ընտանեօք Կ. Պօլիս փոխադրեց իւր բնակութիւնը: Նա բաւական հարուստ մի ծխավաճառանոց ունէր կարինի մէջ և անակնկալ դիպուածով մը պարտուց ահագին գումարով սնանկանալէ յետոյ, ստիպեալ թողուց իւր հայրենիքը և ապաստանեցաւ հօրեղբօրս քով որ պանդխտութեամբ Պօլիս կը գլուխուէր: Մայրս շատ արցունք թափեց, շատ աղաչեց որ չհեռանանք հայրենիքէն. իսկ մեծ մայրս կըսէր իւր որդւոյն. Սարգիս, մեծ է Աստուծոյ աշխարհը և անբաւ է նրա գթութիւնը. դու կարող ես ընտրել մեր բնակութեան համար մի ուրիշ տեղ. եղբայրդ Պօլսոյ մէջ բաւա-

կան հարստութիւն ունի, կերթանք նրա մօտ. նա քեզ նման բարի, գթասիրտ և առաքինի զաւակ մ'է, նա գութ և սէր ունի գէպի իւր ընտանիքը, և մեծ յոյս ունիմ որ անխնամ չթողուր զմեզ. ա՛լ ասկէց վերջը չես կարող կարինի մէջ ապրիլ. բոլոր հարստութիւնդ, մինչեւ անգամ հայրենի տունդ, չարամիտ անձինք (Թուրքեր) յափշտակեցին ձեռքէդ. եթէ չհեռանանք ասկից, այսուհետեւ պէտք է որ մենք ապրինք մութացկանութեամբ միայն. եթէ Աստուած զմեզ թողուց այս անտանկի թշուառութեան մէջ, դարձեալ Նա պիտի պարգեւէ մեզ երջանկութիւն և բարեւաւ վիճակ:

Մեծ մօրս յուսատու խօսքերուն հաւատք ընծայելով հայրս, վերջապէս թողուցինք հայրենիքնիս և եկանք Ա. Պօլիս 1854 թուականին: Հօրեղբայրս ալ ծխափաճառութիւն կրնէր իւսկիւտար Չինկեանէ. Ծուրունու կոչուած շուկային մէջ. նա անմիջապէս մեր բնակութեան համար մի տուն գնեց Սէլամիյէ թաղի Ս. Խաչ եկեղեցւոյ փողոցին մէջ. այդ տունը մինչեւ ցայսօր մեր ժառանգութիւնն է:

Անկից յեւոյ հայրս միանալով իւր եղբոր հետ աւելի ճոխ ծխաւաճառանոց բացին . մի քանի տարի վերջը սուսօ-թրքական սրատերազմին պատճառով շատ յաջող դնացին հօրս դորձերը , նա բաւական դրամ շահեցաւ , մենք ուրախ և երջանիկ էինք . բայց աւա՛ղ որ այդ երկարատեւ սրատերազմի հետ վերջացաւ նաեւ հօրս կեանքն ալ :

Մեր այս անբաղդութենէ յետոյ , մայրս սկսաւ մտածել իւր ապագային վրայ . մի քանի տարիներ հօրեղբայրս օգնեց մեզի . բայց երբ նա դարձաւ հայրենիք իւր ընտանեացը մօտ , անկից յետոյ մենք դարձեալ ինկանք տղքատութեան ծուղակին մէջ . տան հոգը բոլորովին մնաց մօրս վրայ : Հօրս թողած հարստութիւնը մի քանի տարի միայն դիմացաւ . մայրս տեսնելով որ շատ աղքատութեան մէջ ենք , նա սկսաւ հայ մեծատանց ծառայելով սնուցանել զիս և երեք քոյրերս , նա իւր աշխատութեամբ կարող էր հայթայթել մեզի հաց մը միայն . մեր գլխաւոր սընունդն էր ձիթապտուղ , խաշած լուբիա . շատ անգամ Զատիկի օրեր ալ անով կը

կերակրուէինք և երբեմն ալ ցամաք հացով : Մեր գթասիրտ դրացիները տաղաւարի օրեր կօգնէին անկեալ ընտանիքի մը . մին սպտորաստուած համեղ կերակուրներ կը զրկէր , ուրիշ մը բրինձ , իւղ , հաւկիթ . ուրիշ մ'ալ դրամական օգնութիւններ անելով կուրախացնէր մեր անբաղդ գերդաստանը . յետոյ մեծ մայրս այդ աղքատասէր ընտանեաց տուները երթալով իւր շնորհակալութիւնները կը յայտնէր , օրհնելով զանոնք : Ինչպէս որ ըսի , մայրս շատ աշխատաւոր կին մ'էր . ամեն օր արշալոյսը դեռ շծագած նա կերթար հարուստ ընտանեաց տուները ձերմակեղէն լուալու . և երբ երեկոյին տուն կը դառնար , խեղճը գիշերն ալ հանգստութիւն չուներ որ գոնէ իւր ըսպառուած ուժը կազդուրելու համար հանգստանար . նա սուանց ձանձրանալու կը կատարէր տնային բոլոր գործերը , մեր հնամաշ զգեստները կը կարկտէր : Տանը մատակարարը մեծ քոյրս էր . մայրս իւր օրուան աշխատութեան արդիւնքը քրոջս կուտար որ հետեւեալ սուաւօտուն շուկայ երթալով սէտք եղած բաները գնէ :

Աշնան մօտերը կ'սկսէինք դառն աղքատութեամբ տանջուիլ, ձմեռները աւելի թշուառ էինք. արդէն այդ եղանակը աղքատներու անգութ թշնամին է, աղքատներու մարմինը տանջող գործիք մ'է. երկու հօխա ածուխ գնելով ամբողջ օրը և գիշերը անով կանցունէինք և դարձեալ սաստիկ ցրտէ կը դողայինք: Մայրս չկարենալով վեց հոգւոյ օրապահիլը հայթայթել, ստիպուեցաւ մեծ քոյրս ալ ծառայութեան տալ հարուստ հայ ընտանիքի մը, և այդ ալ խիստ չնչին վարձատրութեամբ, երկու մէճիտ ամսականով. անշուշտ այդ գումարն ալ օգուտ մ'էր մեզ համար: Երբ դարուներ կը հասնէր, ալ մենք ուրախ և զուարթ էինք. երկարատեւ ձմեռուան մէջ տանջուող ճնճղուկներու նման դուրս կելնէինք և արեւու ճառագայթները կը տաքցնէին մեր նիհար մարմինները: Ամառուան մէջ իմ աշխատութիւնս մեծ էր. մեր թաղի մէջ ուր որ նոր շէնք մը կը շինուէր, ես ձեռքս կ'իթոց մ'առած կերթայի փայտի կտորներ հաւաքելու. մեր ճերմակեղէնները լուալու համար այդ վառելիքով

ջուրը կը տաքցնէր մայրս և մաս մ'ալ
 ձմեռուան փայտերնիս ապահովուած կը
 լինէինք. անշուշտ այս ալ մեծ օգուտ
 մ'էր մեզի :

Բ

Հազիւ տասներկու տարեկան էի, Բուեն
 Բարեկենդանի երկուշաբթին, այսինքն
 Մեծ Պահոց առաջին օրը, մայրս զիս տա-
 րաւ Նոր Թագի Ազգային Ճեմարանը ու-
 սում առնելու համար: Նա վարժապե-
 տին յանձնած ժամանակ ըսաւ անոր. —
 Պատուելի', ահա քեզի կը յանձնեմ իմ
 որք զաւակս, ասկից յետոյ դու պիտի
 լինիս նրա հայրը, մայրը և պաշտպանը.
 միսը քեզի, ոսկորը ինձի :

Մօրս այս խորհրդաւոր խօսքերէն ես
 ոչ մի բան չկրցայ հասկնալ. Պատուելին
 խոստացաւ որ պիտի աշխատի իմ կրթ-
 թութեանը համար: Մայրս զիս խրատեց
 որ Պատուելի խօսքերուն ունկնդիր լի-
 նիմ. և յետոյ դասատուիս գթութիւնը
 գրաւելու համար մի քանի արցունք թա-
 փեց ու հեռացաւ, թողլով զիս այդ կա-
 սափնարանի մէջ: Թշուառ մօրս այդ

արցունքները շատ դէշ տպաւորութիւն
ունեցան իմ սրտիս վրայ ալ, ես ալ սկսայ
արցունք թափել և «մայրիկ, մայրիկ»,
ազաղակել նրա կտեւէն: Պատուելին ըս-
տառնացաւ ինձ և հրաման տուաւ որ
աշակերտաց կարգը նստիմ: Ես տեօնե-
լով որ անկարելի է նորա ձեռքէն ազա-
տիլ, վասնզի կատուն առիւծին ճանկերուն
մէջ էր, հնազանդեցայ և ծալապատիկ
նստայ տախտակամածին վրայ: Մէկ ժամ
վերջը պատուելին օրհնեալ քերականը,
տուաւ ձեռքս և սկսաւ ազաղակել բարձ-
րաճայն Ա՛յբ, բէ՛ն, գի՛մ, ես ալ անոր
պէս սկսայ արտասանել: Նոյն օրը յաջող
գնացի դասիս մէջ, ես սորված էի Քե-
րականի արաջին, երկրորդ և երրորդ տա-
ռերը: Օրէ օր ես վարժուեցայ և ամեն
օր կը շարունակէի վարժարանը երթալ-
մի քանի ամսոյ մէջ ծաղկոցի յատկաց-
եալ դասերը այսինքն քերականը աւար-
տեցի. յետոյ Պատուելին զիս դրաւ Նա-
խակրթարանի սրահը, նա այդ կարգի ալ
դասատուութիւն կընէր: Այնուհետեւ
ես բարեկամացայ նրա հետ:

Այս ուսուցիչը Ակնցի էր Աբրահամ

անուն , հազիւ քառասուն տարին լրացու-
ցած , երկայնահասակ , մեծ հայկական
քթով . նա մօրուսաւոր էր բայց այտերն
և ծնօտի ներքեւն ածիլուած թուրք սօֆ-
տաներու և կամ քուրդ Նէզիտներու նը-
ման . գլուխը կը դնէր մի Ֆէս որ բոլոր-
տիքը իւղոտած և իսկական գոյնը բոլո-
րովին կորսնցուցած էր , ըստ սրում եր-
կու երկայն և փառաւոր ականջներն ամ-
բողջապէս ծածկուած էին այդ լուսահո-
գի Ֆէսի ներքեւ . նա կը հագնէր մի եր-
կայն ճիւղալի . և կարճ բանթալօն . նրա
վզէն կախուած էր կաշեայ գրպան մը .
այդպիսի գրպաններ կը կրեն Քասթամ-
պօլցի թուրքերը որուն մէջ կը պարունա-
կի «Քէլամը Քատիմ» անուն գիրքը մեր
ուսուցիչն ալ զատ գրպան մը չունենա-
լուն համար , այդ կաշեայ գրպանի մէջ կը
դնէր նամակներ , հաշուեցուցակներ ևլն .
վերջապէս եթէ նա ներկայանար թատ-
րոնի տեսչի մը , անվիջապէս գոհացուցիչ
ամսականաւ մը կրնար ընդունուիլ ա-
պուշի դեր կատարելու համար : Շատ
բարկացող մէկն էր . օր մը դասիս մէջ
անյաջող լինելուս համար զիս երկու ան-

գամ երդեւ տուաւ Փալախայի ներքեւ .
այդ անիծեալ և միանգամայն օրհնեալ
Փալախան վարժարանի մը աշակերտաց
հոգին և մարմինը մաշեցնող մի դործիք
է . բայց սա ալ պէտք է դիտեալ որ չըն-
չին յանցանքի մը համար կարժանանա-
լինք Փալախայով պատժուելու : Ամենէն
սոսկալի պատիժ մ'ալ կար մեր ձեմարա-
նի մէջ . երբ ծանր յանցոնք ունենար
աշակերտ մը , անմիջապէս նրա երկու ա-
փերուն մէջ ժամերով բռնել կուտար
ծանր Յայսմաւուրքը . եթէ յանցաւոր
տղան մարմնային կազմով նիհար էր , եր-
կու ոտքի վրայ կը կանգնեցնէր զնա ,
Յայսմաւուրքը գլխէն վեր բռնել տալով .
իսկ եթէ ուժեղ էր տղան , վա՛յ անոր ,
այն ատեն պէտք էր որ նա հնդկահաւի
նման մէկ ոտքի վրայ կենար ժամերով ,
ուրեմալով դարձեալ Յայսմաւուրքը ա-
փերուն մէջ :

Ամառուան սաստիկ օդի ջերմութենէն ,
ուսուցիչ Արրահամը գլուխը երկու ձե-
ռացը մէջ առած և գրասեղանին կրթնած
կը քնանար : Օր մը երբ խոր քունի մէջ
էր , մի քանի անառակ աշակերտաց հետ

միանալով Պատուելիի ֆեսի բխարիւն
մի քանի թեւ քաշեցի և եկայ նստայ տեղս .
նոյն օտեն ընկերներս ճանճ կորսային ,
ես ալ մէկ կողմէն այդ թեւերը ճանճերու
ոտքերուն կապելով թող կուտայի : Պատ-
ուելին կարթննայ և իւր գրասեղանի վը-
րայ կը տեսնէ ճանճերու խումբ մը որոնց
ոտքերը շղթայակապ էին իւր ֆեսի բխարի-
ւի թեւերուն : նա անմիջապէս ոտքի
ելաւ և նախակրթարանի աշակերտները
կարգաւ պատժեց փայտի հարուածներով :
Սյդ պատիժ կը կոչուէր սըրա ֆալսապի :

Անցան մի քանի տարիներ . ես գտայ
ինճ մի հաւատարիմ ընկեր , Գէորգ ա-
նուն . այդ պատանին շատ կը սիրէր զիս
և ես ալ փոխադարձաբար զանի . երկուք-
նիս ալ միեւնոյն հասակը ունէինք . երբ
վարժարանի ցերեկուան ճաշու զանգակը
կը հնչէր , նա անմիջապէս սեղանատուն
իջնելով իմ և իւր ծրարը կը բանար . ես
յետոյ կիջնէի և կը տեսնէի որ ամեն բան
պատրաստուած է , և այսպէս միատեղ
կը ճաշէինք : Արեկոյին վարժարանի ար-
ձակումէն վերջը , կեւնէինք միատեղ շր-
ջագայութեան , մենք ընտրած էինք մե-

զի գրօսաւայր Պատղար-Պաշիի Հայոց դե-
րեզմանատուներ . դասադրքերնիս առնե-
լով անդ գերեզմանաքարի մը վրայ նստած
կը կարդայինք : Ս Սատուածածնայ շա-
րաթօրն էր . մենք դարձեալ ելանք մեր
սովորական պատյար ընելու . ասանք որ
խուռն բազմութիւն մը նուագարաննե-
րով ճանբայ ելած էին Սլէմտաղի ուխ-
տի երթալու . մենք ալ այդ բազմութեան
ետեւէն երթալով մինչեւ Գընըքըր դա-
ցինք : Գէորդ ինք առաջարկեց որ մենք
ալ միանանք այդ խմբի հետ և երթանք
մինչեւ Սլէմտաղի : արդէն էս պատրաստ
էի և Գէորդի այդ առաջարկութեան կը
սպասէի : Երբ սկսանք յառաջանալ դէպի
ուխտատեղին , ես կանգ առի և ըսի ըն-
կերոջս . Եղբայր , ասանց մեր ծնողաց հը-
րամանին ի՞նչպէս կրնանք հեռանալ : —
Ատի դիւրին է , ըսաւ Գէորդ . այս խմբի
հետեւող մեր փողոցի տղաներ շատ կան
որոնք այժմ պիտի վերադառնան . կըսենք
անոնց որ երթան լուր տան մեր ծնողաց :
— Լա՛ւ , պատասխանեցի ես և այնպէս
ըրինք :

Սլէմտաղի Իւսկիւտարէ 4-5 ժամ հե-

աւարութիւն ունի , եթէ ոտքով երթայ մարդ . իսկ կառքով $2\frac{1}{2}$ ժամ կը տեւէ . այս գիւղ կը գտնուի Իւսկիւտարի արեւելեան հիւսիսային կողմը և 50-60 տուն բնակիչ ունի , բոլորն ալ Հայ • ունին նաև մի հոյակապ եկեղեցի Ս . Նշան անուամբ , որուն տօնախմբութիւնը կը կատարուի Ս . Աստուածածնայ օրը . Պօլսոյ ամեն կողմերէն և մերձակայ գիւղերէն Հայեր ընտանեօք ուխտագնացութիւն կանեն . բացի այս տաղաւարէ , մայիս ամսոյ ըսկիզբը հայ մեծատունք օգտափոխութեան երթալով ամբողջ մայիսը անդ կանցունեն :

Ս . յժմ դառնանք մեր ճամբորդութեան վրայ տեղեկութիւն տալ ընթերցողացս : Մենք ուխտաւորաց բազմութեան ետեւէն ճանապարհ ընկանք , երեք ժամ անընդհատ հետիտան ճամբորդելէ վերջ խըմբովին հասանք Տուտուրլու անուն թրքարնակ գիւղը . բազմութիւնն այնտեղ մէկ հոգնութիւն առնելու մտադիր էր : Արժարողդարար , նոյն օրուան արեգակը կայրէր և երկինքը կրակ կը թափէր . մենք երկու անփորձ պատանիներս արիւն քլր-

տինքի մէջ մնացած , այսպէս նուազեալ
գացինք ընկուզենիի մը շուքին տակ նըս-
տանք . Գէորգ մի քանի վայրկեան վերջը
օձի նման սողալով մօտեցաւ ինձ և ըսաւ .
— Եղբայր , ես անկարող եմ այլ եւս
քալել : — Ինչո՞ւ , հարցուցի ես զարմա-
նօք : Նա բացաւ ոտքերը , ողբալով ինձ
ցոյց տուաւ , տեսայ որ ոտիցը կաշին
կարմիր գոյն առած և ուռեցած էր , կար-
ծես թէ եռացեալ ջրով խաշած էր : Ըն-
կերոջս այս դժբաղդու թիւնը տեսնելով
սրտիս ցաւէն չկրցայ ինքզինքս զսպել ու
սկսայ ես ալ դառնազին լալ : Այնտեղ
գտնուող մի հայ սրճարանապետ որուն
անունն էր Ասֆէքսի Սարգիս , մօտենա-
լով մեզ հարցուց թէ ինչո՞ւ կուլանք .
եւ հեծկլտալով սլատմեցի եղեւութիւնը .
նա հեռացաւ մեր քովէն և երկու վայր-
կեան վերջը բերաւ փոքրիկ շիշ մը որ լի
էր ձիթաիւղով . առաւ Գէորգի ոտքերը
իւր ձեռացը մէջ և սկսաւ ձիթաիւ-
ղով շփել ուռեցած մասը . յետոյ
սլատուիրեց որ առնուազն երկու ժամ
հանգիստ նստի : Ըստ սլատուէրի Աս-
ֆէքսի Սարգիսին , երկու ժամի չափ

մենք կեցանք այդ ընկուզենոյ հովան-
ւոյն ներքեւ : Բազմութիւնը արդէն մեկ-
նած էր Տուտուրլուէ : Երեկոյին արե-
ւը մարը մանկլու կը պատրասուէր , ես
մօտենալով Քէօրգի ըսի . — Բարեկամ ,
ոտքի ե՛լ տեսնենք , կարո՞ղ ես ճանբայ
քալելու : — Չեմ յուսար , պատասխանեց
նա : — Փորձէ՛ անգամ մը , դարձեալ
կրկնեցի ես հարցումս : Նա ելաւ կանդ-
նեցաւ ոտքի վրայ և մի քանի քայլ եր-
թալով դալով պատասխանեց . Եւ ոչ մի
ցաւ չեմ զգար : — Օ՛ն ուրեմն ճանբայ
ելնե՛նք , ճիշդ երկու ժամ եւս ունինք
մինչեւ Ալէմտաղի հասնելու , ըսի ես :

Երբ երեկոյեան արեգակի դողդոջուն
ճառագայթները մի քանի րոպէ եւս փայ-
լեցին մօտակայ լեռանց գագաթին վրայ
և ապա մարող կեանքի վերջին նշոյլնե-
րու նման խսկոյն մարեցան , նոյն ատեն
մենք մտանք Ալէմտաղի ընդարձակ
անտառը . գիշերային մթութիւնը սկսաւ
հետզհետէ թանձրանալ , ընդհանուր լը-
սութիւն մը կը տիրէր ամենուրեք , ան-
տառային նեղ ճանապարհի վրայ ոչ մի
ճամբորդ չհանդիպեցաւ մեզ որ գտնէ

նրա ընկերապնալով երթայինք . մենք ահ
ու գողով առանց աղմկի այդ լուսթեան
մէջէն կը շարունակէինք ճանրանիս . մեր
բաղդէն նայն գիշերը լուսինն ալ շէր ե-
րեւեր որ առաջնորդէր երկու թշուառա-
կան և մոլորեալ պատանեաց . բաւական
ճամբայ քալեցինք , դեռ ոչ գիւղի ճրագ-
ները կերեւէին և ոչ ալ մի շան ձայնը կը
լսէինք . ես հասկցայ որ մենք ուղիղ ճա-
նապարհը կորուսած էինք . բարձր ծառի
մը ներքեւ նստանք . որոշեցի գիշերը
անտառին մէջ անցունել , բայց Քէ որդի
միտքը շէի գիտեր :

— Շատ ուշ մնացինք , յարեց ընկերս :

— Այո՛ , կէս գիշերը անցած է , պատաս-
խանեցի ես ցած ձայնով : — Արդեօք դեռ
չատ ճանապարհ ունի՞նք երթալու , երկ-
րորդ անգամ հարցուց Քէորդ : — Եթէ
այս ճամբէ չչեղինք , մինչեւ առաւօտ
պիտի քալենք և առանց գտնելու ուղիղ
ճանապարհը պիտի կորսուինք բոլորովին
և վայրենի անասնոց կերակուր պիտի լի-
նինք :

Իմ այս խօսքերուս վերայ նա ամբողջ
մարմնով գողաց . իսկ նրա դէմքը ինչ

գոյն ստացել էր, աստի շեմ կարող նկարագրել վասն զի գիշերուան թանձր խաւարի մէջ շէինք կարող իրարու գէմք տեսնելու :

— Աւրեմն ի՞նչ անել պէտք է, ըսաւ նա :


— Պէտք է գիշերը հոս անցունենք, վաղ առաւօտ արշալոյսի ծագման ատեն ճամբայ կեննենք :

Գէորգ ընդունեց իմ առաջարկը ու մտանք անտառին մէջ գիշերը անցունելու :

Գ

Հետեւեալ առաւօտուն լոյսը նոր էր բացուել, դեռ նոր կը լսուէին թռչնոց քաղցր և ուրախ արշալուսեան մեղեդիներն, մենք ճամբայ ելանք, դարձեալ նոյն անտառային նեղ ճամբով, Հազիւ կէս ժամ եղած էր մեր ճամբայ ելնելը, մեզ դիմաւորեց մի հայ գիւղացի, նա զարմանքով հարցուց մեզ թէ ո՞ւր կերթանք և ուսկի՞ց կուգանք : Պատմեցինք ամեն փորձանքները որ դըռնխնիս եկած էին. անձանօթ գիւղացին շարունակելով իր խօսքը ըսաւ . Այս ճանրան զձեզ վա-

րի դիւղը կը տանի : Մենք աղաչեցինք որ առաջնորդէ մեզ դէպի ուղիղ ճամբան . նա ընդունեց մեր այս աղաչանքը և մէկ ժամէն հասանք Ալէմտաղի : Առաւօտեան քաղցր զեփիւռը կը ծաւալէր փափուկ հովասուն թարմութեամբ . երիտասարդ հոյ գեղջկուհիք տօնական հազուստով զարդարուած կանգնած էին իւրեանց դրան շէմքի վրայ և գաղտուկ կը նայէին ուխտաւոր երիտասարդներուն . ամբողջ գիւղին մէջ անպատմելի ուրախութիւն մը կը տիրէր . բազմութիւնը հետզհետէ կարգաւ կը մեկնէին Ս. Նշան եկեղեցին . մենք ալ երկու ընկեր հետեւացանք նոցա : Ս. Պատարագի արարողութեան վերջանալէն յետոյ ուխտաւորները խուն բազմութեամբ ճամբայ ելան դէպի արեւելեան կողմը . մենք կարծեցինք որ պիտի վերադառնան մի այլ ճամբով և դարձեալ հետեւեցանք նոցա : Գիւղէն ելնելով երկու վայրկեանէն մտանք ահագին անտառ մը որ զարդարուած էր շագանակի բարձր ծառերով . կէս ժամէն հասանք Թաշ-Տէլէն կոչուած զրօսաւայրը . անդ կիսակոր-



ծան փոքրիկ շէնք մը կար բարակ ծա-
ռերէ հիւսուած որ սրճարանի տեղ կը
գործածուէր . այդ շէնքի դէմը խոր փո-
սի մը մէջ կար քարաշէն աղբիւր մը , որմէ
կը բղխէր քաղցրահամ և զով ջուր . այդ
ջուրը շատ անուանի է և կը գովեն Պօլ-
սեցիք որ «Թաշ-Տէլէն սույու» կը կոչուի .
Պօլսոյ մէջ ամեն մարդ կը փափաքի այդ
ջուրէն խմել , բայց անոր նուազութեան
համար չեն կարող գտնել : Ուխտաւորնե-
րը այդ աղբիւրի շուրջը խումբ խումբ
կարգաւ նստան փախաթի կտորներու վը-
րայ : նուազարանները քաղցրածայն կեր-
դէին . իւրաքանչիւր խումբ սկսաւ Բա-
գոսի արարողութիւնն կատարել ամե-
նայն ջերմեռանդութեամբ : Աղբիւրին
վրայ փոքրիկ գագաթի մը գլուխը հա-
րուստ և ազնուական ընտանիք մը նըս-
տած էր . մենք ալ քիչ մը հեռի բազմու-
թիւնը կը դիտէինք . այդ հարուստ ըն-
տանեաց տիկինը տեսնելով երկու անաէր
պատանիներ , կանչեց մեզ և հրաման ը-
րաւ որ նստինք . մենք ալ նստանք ծառի
մը կոճղին վրայ : Բարեգութ տիկինը իւր
ծառային հրամայեց որ կերակուր տրուի

մեզ . մի քանի վայրկեան վերջը ծառան
երեւցաւ որ սրննձեայ վայլուն մատու-
ցարանի մը վրայ կերպ կերպ կերակուր-
ներ դրուած բերաւ մեր առջեւ . մենք
ալ թափառական ցիկաններու նման ան-
քաղաքավարութեամբ կերանք , աւելցած
մասն ալ մեր թաշկինակներու մէջ ծրա-
րելով ոտքի ելանք և ի նշան մեր շնոր-
հակալութեան գլուխնիս խոնարհու-
թեամբ շարժեցինք ու հեռացանք :

Արդէն տեղեկացած էինք որ բազմու-
թիւնը մի քանի օր եւս անդ սիտի կե-
նային , իսկ մենք երկու ընկերներս կէսօր
ժամանակ ճամբայ ելանք տուն վերա-
դառնալու . մեզ այնպէս կը թուէր որ
տարիներով պանդխտութիւն ըրած էինք ,
ճամբուն վրայ տեսանք բազմաթիւ կառ-
քեր , որոնք ածուխ կը փոխադրէին իւս-
կիւտար ծախելու համար . արդէն իւս-
կիւտարի շրջակայ գիւղացիներն մեծ մա-
սամբ այդ արհեստով կը զբաղին : Մենք
երբեմն այդ կառքերու ետեւը կը հեծ-
նէինք և երբեմն ալ ոտքով կը քալէինք .
քանի կը մօտենայինք մեր հայրենիքին ,
սափ սրտերնիս ահուդողի մէջ կիյնար ,

վասն զի առանց մեր ծնողացը հրամանին
հեռացած էինք :

Օրուան արեւը արդէն մտած էր իւր
օթեւանը , բայց հորիզոնը դեռ կը վառ-
ուէր ոսկեղէն բոցերով . երբ հասանք
Պաղլար պաշիի գերեզմանատունը , Քէօրգ
բաժնուեցաւ ինձնէ . ես գացի մեր տա-
նը շէմքին վրայ նստայ , չի կրցայ ներս
մտնելու համարձակութիւնն ունենալ
վասն զի յանցաւոր էի . սրտիս տաղնա-
պէն սկսայ դառնագին լալ . մայրս լսելով
իմ ձայնը , դուռը բացաւ ու քաղցրու-
թեամբ ներս առաւ զիս . իմ դուռնէն
ներս մտնելը և դուռը մեքենաբար գոց-
ուիլը մէկ եղաւ . նա բռնեց ականջէս և
սկսաւ իւր լայն ձեռքերով աստակել
զիս . ես անդադար արցունք թափելով
կաղաչէի որ չզարնէ ու բարձրաձայն կա-
ղաղակէի « մեղայ , մայրիկ , մէկ մ'ալ
չեմ ըներ » : Քոյրերս վրայ հասնելով ա-
ղաատեցին զիս ու տարին իրենց սենեակը
Քիչերը անցուցի մեծ անհանդստութեամբ .
հետեւեալ առաւօտուն անձայն լռիկ մըն-
ջիկ դուրս ելայ և գացի վարժօրան :
Մտնելով դասարանի սրահը տեսայ որ Քէ-

որդ պատժոյ ենթարկուած էր . երկու վայրկեան յետոյ ես ալ ամերուս մէջ կը կրէի Յայսմաւուրքը : Երեք օր շարունակ պատուելի Աբրահամը այս տաժանելի պատժոյ տակ չարչարեց զմեզ անգթաբար . այդ երեքօրեայ պատիժը այնպէս անարեկեց մեզ որ ալ այն օրէն ուխտեցինք անխոհեմութեամբ չվարուիլ մեր ծնողաց և դաստիարակին հետ :

Դ

1870 թուականն էր :

Բժշկապետ Ստեփան փաշա Արսլանեանի բարերարութեամբ Նոր թաղի ճեմարանի աղքատիկ աշակերտներէն երկու հոգի , ես և իմ անբաժանելի ընկերս (Գէորգը) , Տէրութեան Բժշկական վարժարանը դրկուեցանք : Վարժարանի տեսուչը որոշում տուաւ որ Գէորգը բժշկութիւն ուսանի , իսկ ես վիրաբուժութիւն . մենք այն օրէն եղանք զինւոր , վասն զի այդ վարժարանի ներքին և գիշերօթիկ եղած էինք . մեր հագուստը , ուտելիքը և ամէն մեծ ու փոքր ծախքերը Տէրութեան գանձէն կը վճարուէին . այս կեր-

սով մենք զինւորական դասուն կը վերաբերէինք : Օրէնքը այնպէս կը պահանջէ որ երբ այդ վարժարանէն մի անձ ուսումը աւարտելով դուրս ելնէ , երեսուն տարի Օսմանեան բանակներու մէջ սաշտօն վարէ . և երբ այդ երեսուն տարին լրանայ , հանգստեան թոշակ (թաքավիտ այլըզը) կը արուի իրեն :

Շարաթն մի անգամ ուրբաթ օրերը ուսանողաց հրաման կուտային իրենց տունը երթալու , կիւրակէ երեկոյին դարձեալ վարժարան դառնալու պայմանաւ : Մենք ամեն ատեն ճշգութեամբ կը կատարէինք անոնց պատուէրները և երբէք մեր պարտականութիւններուն զանցառութիւն չէինք աներ : Անցած էր 5 տարի մեր վարժարան մտնելէն ի վեր . 1874ին ես վիրաբուժական արհեստիս շրջանը աւարտեցի ու անմիջապէս ինձ տուին երկրորդ գնդի չորրորդ բանակի վիրաբուժութեան պաշտօնը : Այն թուականին չորրորդ բանակը կը գտնուէր Ռակուզա (Մօնթէնէկրօ) վասն զի Օսմանեան բանակները անդ հաւաքուած էին Տէրվիշ փաշայի ընդհանուր հրամանատար

րութեան տակ և կը պատրաստուէին յարձակիլ մեծ զօրութեամբ Յէթինայի(1) վրայ : Ես անմիջապէս ճամբայ ելայ Կ. Պօլսէն պատերազմական նախարարի հըրամանաւ դէպի Մօնթէնէկրօ պաշտօնատեղս . երբ հասայ այնտեղ, տեսայ որ ամեն կողմերէ Օսմանեան բանակներ և Ալպանիացի կամաւոր զինւորներ (որոնք Պաշը պօզուք կը կոչուին), թուով 50 հազարի մօտ, հաւաքուած էին Ռակուզայի ընդարձակ դաշտը և ամենայն արագութեամբ պատրաստութիւններ կը տեսնէին այդ փոքրիկ և ազքատ երկիրը հիմնայատակ կործանելու և քրիստոնեայ բնակիչները սրէ անցունելու համար :

Նոյն թուականի նոյեմբեր 20ին տուաւ օտեան արշալոյսը դեռ չի ծագած, ճանապարհի պատրաստութեան համար ամեն կողմէ սկսան փողերը հնչել . ամենայն աճապարանօք հազարաւոր վրան-

(1) Յէթինա՝ Մօնթէնէկրօյի մայրաքաղաքն է . այժմ ունի 10,000 բնակիչ . իսկ այն թուականին բնակչաց թիւն էր 4-5 հազար :

ներ մէկ վայրկենի մէջ վար առնելով ջորիններու վրայ կը բեռցունէին : Անվեհեր զօրաց դէմքը ուրախութեամբ կը խայտար , իսկ երկչոտ զինուորաց դէմքը կը նմանէր սառն մարմարիոնի , ես ալ այդ վերջիններու կը պատկանէի :

Կէս օրուան երկու ժամ մնացած , այդ բազմութիւնը սկսաւ յառաջ ընթանալ դէպի պատերազմի դաշտը . երեկոյին հասանք ժէշթրիցա անուն գիւղը : Ժէշթրիցա ընդարձակ մի գիւղ է որուն բնակիչները սլաւ են և յետին աստիճան աղքատ . այդ երկրի բնակիչներն ալ Հայաստանցւոց նման պանդխտութեան կը դիմեն և դառն աշխատանքով դրամ շահելով կը վերադառնան հայրենիք : Նոյն գիւղերը հոն անցունելու օրոշում տրուեցաւ :

Բարբարոս Ալպանիացիները ժէշթրիցաի ողորմելի քրիստոնեայ բնակչաց վրայ յարձակելով սկսան կողոպտել անոնց հարստութիւնը : Արդէն երկու բան մահմէտականներու քաջութիւնը կը գրգռէ և սիրտ կուտայ անոնց թշնամւոյն հետ կռուելու համար . մէկը աւարառութեան

ցանկութիւնը, միւսը կրօնական մոլե-
ռանդութիւնը, այս երկու բանի համար
ոչ մահուանէ կը վախնան և ո՛չ կրակէ, չպատակ
գիւղացւոց վրայ յարձակումն
սկսաւ խիստ սրտաշարժ կերպով, ան-
խիղճ պաշը պօզուք ալպանիացիք աղ-
քատիկ խորճիթները խուզարկելով 13 տա-
րեկանէն վեր մինչեւ անգամ 50 տարե-
կան կանանց պատիւը սկսան բռնաբա-
րել փողոցներու մէջ առանց ամօթահա-
րելու: Մօնթէնէկրօցի կիներն ալ քաջ է
իւր այրին պէս. երբ այդ խեղճ արարած-
ները անձնատուր չըլլալով դէմ կը դնէին
անոնց և չէին հնազանդիր անոնց կամ-
քի, անգութ և վայրենի ալպանիացի-
ներն իրենց եարականը պատեանէն դուրս
առնելով անմիջապէս կը խողխողէին զա-
նոնք: Մի քանի քայլ անդին ուրիշ սըր-
տառուչ տեսարան մը կը ներկայանար.
անոնց հրամանատարն ալ հեռուէն բարձր
գագաթի մը վրայ իւր սրին կռթնած կը
դիտէր զանոնք և չէր արգիլեր, անշուշտ
նա ալ զուարճութիւն մը կը զգար: Ահա
այսպիսի բարբարոսութիւններ աչքերովս
տեսած եմ:

Ընթերցողը թող չզարմանայ և թող
անհաւատալի չթուին իրեն մեր այս նկար-
րագրութիւններ. Օսմանեան պետութիւ-
նը երբ քրիստոնեայ ազգի մը դէմ պա-
տերազմ հրատարակէ, նա կը յարձակի
նախ և առաջ իր քրիստոնեայ հպատա-
կաց վրայ, աւարի կուտայ անոնց հարըս-
տութիւնը, կայրէ ու մոխիր կը դարձնէ
անոնց խրճիթները, կը քանդէ եկեղեցի-
ները ու կը սրբապղծէ, կաթընկեր երե-
խայն իւր մօրը գրկէն կը յափշտակէ, օ-
րօրոցին մէջ քնացող անմեղ մանուկը
քաշկռտելով դուրս կը հանէ ու իր ան-
խնայ սրովը մի քանի կտոր ընելով կը
նետէ անոր արիւնլուայ դիակը շանց
առջեւ, ըսելով թէ ասոնք ալ կեալուր են
և թէ պէտք է ջնջել քրիստոնէից սե-
րունդը աշխարհիս վրայէն որ Օսմանի
որդիները տիրեն ամբողջ աշխարհին :
Արդեօ՞ք Արարիչը չէ սիրած քրիստոն-
եայները որ զանոնք հալածելու համար
ստեղծած է այս անգութ և վայրենի ազ-
գը որուն բարբարոսութեանց զոհ լինին
ամեն անգամ. արդեօ՞ք Արարիչը ստեղ-
ծած է թուրքը իբրեւ լոյս և քրիստոն-

եայք իբրեւ խաւար որպէս զի հալածէ
լոյսն զխաւարը ... : Ո՛չ , ո՛չ , այդպէս չէ
կարելի վճռել . վասն զի ով որ աչք ունի ,
կը տեսնէ թէ Քրիստոսի սուրբ կրօնքը
լոյսն է , իսկ Մուհամմէտի պիղծ կրօնքը
խաւար միայն կարտադրէ . և ահա անոր
համար է որ թէեւ երբեմն լոյսին խա-
ւարը կուգայ յաջորդել , բայց լոյսը ան-
պակաս է միշտ կենդանի աշխարհի
վրայէն և վերջնական յաղթութիւնը
շոյսինն է : Լոյսն է որ կենդանութիւն
կը պարգեւէ աշխարհին :

Նոյեմբեր 21ին ժէշթրիցա գիւղը բո-
լորովին աւերակ դառնալէ յետոյ , ժողո-
վրդեան մէկ մասը անտառը փախած էին
կեանքերնին ազատելու համար . Օսման-
եան բանակները թողլով այդ դիրքը յա-
ռաջացան դէպի Ըշթրուք : Մօնթէնէկ-
րօցիք այնտեղ իրենց բարձր և նպաստա-
ւոր պատերազմական դիրքերը բռնած
էին արդէն , երբ թշնամիք մօտեցան
այդ հռչակաւոր հերոսներուն : Նոքա
անմիջապէս սկսան բարձր ժայռերու վը-
րայէն հրացանի հարուածներ արձակել
Օսմանեան բանակներուն , պատե-

րազմը սաստկացաւ . Մօնթէնէկրօցիք՝
Թուրքերը առանց իրենց մօտեցնելու
մեծ կոտորած մը տուին խարեբայ մար-
գարէի ժողովրդեան . պատերազմը տե-
ւեց մինչեւ արեւու մարը մտնելը .
Տէրվիչ փաշա չկարողացաւ դիմադրել ա-
նոնց . երեկոյին տեղեկացայ որ օսման-
եան զօրքերէն 260 հոգի մեռեալ և 455
հոգի վիրաւորեալ կայ : Գիշերը ան-
ցուցինք դարձեալ Ժէշթրիցա գիւղի
աւերակաց մէջ :

Հետեւեալ օրն ընդհանուր հրամանա-
տարը իւր օգնական փաշաներն իւր մօտ
հաւաքեց և խորհրդակցութեամբ որոշում
տուին որ նոյեմբեր 24ին մեծ զօրու-
թեամբ յարձակում ընեն Ըշթրուքի անց-
քէն անցնելու համար որպէս զի կարող
լինին Յէթինան գրաւել : Թուրք զինուոր-
ները սաստիկ վրէժխնդրութեամբ լեց-
ուած էին Մօնթէնէկրօցւոց դէմ . իւրա-
քանչիւր բանակի մէջ կը տիրէին աղմուկ
և հայհոյանք թշնամոյն դէմ , զինուորք
պատրաստութիւն կը տեսնէին , մին հը-
րացունը կը մաքրէր , միւսը գնդակներու
ժանգերը կիւղոտէր : Այսպէս կարգաւ

կաշխատէին ամեն մարդ և ահա եկաւ նոյեմբերի 24րդ օրն . առաւօտեան արշալոյսը դեռ չէր ծագած , Թրքաց թընդանօթները սկսան ռմբակոծել թշնամուցն դիրքերը : Մօնթէնէկրօցիները չը պատասխանեցին . այնպէս ձեւացուցին որ փախուտ տուած են իրենք : Թրքաց զօրաբանակները սկսան յառաջանալ :

Ընթերցողացս գաղափար մը տալու համար այդ անցքի վրայ , պարաք կը համարիմ նկարագրել աստ : Ընթրուք կոչուած տեղը մի նեղ ճանապարհի անցք է որուն լայնութիւնն է $2 \frac{1}{2}$ մէթր և երկայնութիւնը կը տեւէ $\frac{1}{4}$ ժամ . ճանապարհի երկու կողմի բարձրութիւնն է 200 մէթր . կարծես բնութիւնը ստեղծած է այդ դիրքը պատերազմող անզօր ազգի մը համար . վարէն մինչեւ վեր սրածայր ապառաժներով զարդարեալ է . եթէ մարդ գլուխը դէպի երկինք վերցնէ , կը սոսկայ : Այդ բնական բարձրաբերձ ապառաժներու գագաթը Մօնթէնէկրօցիք շինծու ծառեր տնկած էին որոնց մէջ փոքրիկ լեռնային թնդանօթներ զետեղուած էին : Երբ Տէրվիշ փաշայի բանակները ամ-

բողջապէս ներս մտան Ղշթրուքի անցքէն,
այն ատեն Մօնթէնէկրօցիք սկսան թըն-
դանօթի ռուբեր արձակել և ապառա-
ժի ահագին կտորներ գլորել դէպի վար
Օսմանեան զօրաց վրայ . այս վերջին գոր-
ծողութիւնը կատարողները կանայք էին
որոնց ամուսինները զէնքով կը պատե-
րազմէին : Ընթերցողը թող երեւակայէ
անգամ մը թէ այդ նեղ անցքի մէջ ինչ
սարսափելի տեսարան մը կը ներկայանար,
դիակ դիակի վրայ , վիրաւորեալք վիրա-
ւորելոց վրայ , մին օգնութիւն կազաղա-
կէր «Նա՛ Մուհամմէտ» կոչելով , միւս մը
մահուան վիճակի մէջ կը մրմռար «Նա՛
Ալլահ իլ Ալլահ» : Ահա այսպէս առաւօ-
տէն մինչեւ կէսօր տեւեց պատերազմը .
Տէրվիշ փաշա չկրնալով դիմանալ ստիպ-
ուեցաւ ետ քաշուիլ 3 հազարի չափ մեռ-
եալ և 4 հազարէն աւելի վիրաւորեալ
թողլով . այդ վիրաւորելոց մին ալ ես էի :
Հետեւեալ օրը բոլոր վիրաւորեալները
փոխադրեցին Մասթարի հիւանդանոցը :

Տէրվիշ փաշա խոստացած էր Սուլթան
Ալիզի որ եթէ զինքը ընդհանուր զօրաց
հրամանատար կարգէ, կրնայ ամբողջ Մօն-

Թէ՛նէ՛կրօցւոց երկիրը դրաւ եւ : Սուլթանը ընդունելով իւր առաջարկը ուղարկած էր զինք . բայց երբ այնչափ զինուոր կոտորեց և չկրցաւ յաջողիլ , ստիպուեցաւ հրաժարիլ այդ պաշտօնէ և մեկնիլ Կ. Պօլիս , ճերմակ երեսով . . . ուխտելով որ մէկ մ'ալ այդ երկրի անունը չտայ իր կենաց մէջ , վասն զի կերած էր այդ քաջերու բարատան : Ահա այսպէս վերջացաւ Թրքաց այդ վերջին պատերազմը Մօնթէնէկրօյի հետ : Իսկ ես չորս ամիս Մասթարի աւստրիական հիւանդանոցի մէջ մնացի անոք և անմխիթար , մինչեւ որ վէրքերս դարմանուեցան :

Ե

Այժմ դառնանք մեր հայրաստան ընկերի կեանքը նկարագրել : 1878 թուականին իմ բարեկամ Քէորզի մայրը մեռաւ : Քէորզի փոքրիկ եղբայրը և երեք քոյրերը թշուառութեան ենթարկուած էին և այդ թշուառութեան պատճառն ալ անոնց հայրն էր : Այս անձը վատահոգի սրիկայ մ'էր . նա իւր կնոջ հիւանդութեան օրերը կը թողուր զնա ան-

պաշտպան և ինքզինքը արբեցողութեան
տալով անպատիւ կանանց հետ կը զուար-
ճանար . երբ մահամերձ կինը կը տեսնէր
այս անվայել եղելութիւնները , կը զգու-
շացնէր զնա և կը խրատէր որ հեռի կե-
նայ այնպիսի անբարոյականութենէ . բայց
նա փայտ մը առնելով ձեռքը կատաղա-
բար կը յարձակէր խեղճ կնոջ վրայ և
անգթօրէն կըհարուածէր դիակ դարձած
կինը : Այս անձը սափրիչ Սաշիկ կը կոչ-
ուէր . նրա բնակավայրն էր Խուսիւտար
Վանքի Այգի կոչուած արուարձանը . հա-
զիւ 38-40 տարեկան , նիհար և սեւադէմ
մէկն էր . իւր աչացը մէջ կը տեսնուէին
արեան բարակ բիծեր որ նշան մ'էին իւր
արբեցողութեան : Պէտք չէ զարմանալ
Սաշիկի վայրենի բնութեան վրայ , վասն
զի կըսէին թէ նրա հայրն ալ ժամանա-
կաւ մի ոճրագործ է եղեր . անոր համար
հոս կը բերեմ այն հայկական առածը թէ
«Օձէն ձուկ չծնիր, ոչ ալ դայէն դառն» .
հայրը մարդասպան մ'էր , իսկ որդին
սրիկայ : Այս ընտանեաց մէջ ժամանա-
կաւ կը թագաւորէր մշտական սէր և եր-
ջանկութիւն , բայց այժմ լացն ու կոծը ,

հառաջանք և արտասուքն եղան իրենց
բաժին . հիւանդ կինը չդիմանալով իւր
ամուսնոյն բարբարոսութեանը, իր կեան-
քը վերջացուց : Կնոջ մահուանէն յետոյ
աւելի սարսափելի կերպով սկսաւ ընտա-
նեկան կռիւը . հայրը սկսաւ ծեծի տակ
հոգին հանել իւր հարազատ զաւակնե-
րուն : Քէորդ ապստամբեցաւ իւր անբա-
րոյական հօրը դէմ և արդէն արդարու-
թիւնն այնպէս կը պահանջէր :

Խաչիկ իր կնոջը մահուանէն երեք օր
վերջը հեռացաւ տունէն թողլով իւր որր
զաւակներն . նոյն արուարձանի մէջ նա
մի անպատիւ կին կը սիրէր . գիշեր ցե-
րեկ չէր բաժնուէր անկէ . որբերը ամայի
տան մէջ փակուած անօթի և անխնամ
անդադար արցունք կը թափէին : Քէորդ
բժշկական վարժարանի ներքին աշակերտ
ըլլալուն պատճառաւ շաբաթը մի անգամ
հրաման ունէր տուն երթալու : Ուրբաթ
օր մը Քէորդ տուն երթալով իր եղբարցը
մօտ , ահանատես եղաւ իւր վայրենի հօր
գործած բարբարոսութեան , լսեց բոլոր
եղելութիւնը և յետոյ դիմեց իւր տա-

ներէց քահանային , Նոր Թաղի Թաղական
խորհրդոյն և ամենէն վերջը Անմահն Ներ-
սէս Պատրիարքին . սպասեց մի քանի շա-
բաթներ , բայց հայրը զգաստանալու փո-
խարէն աւելի եւս կը սաստկացնէր բար-
բարոսութիւնը . ոչ տաներէցը , ոչ Թա-
ղական խորհուրդը և ոչ ալ Պատրիարքը
կարող եղան Սաշիկը ուղղութեան բերել .
ամեն երեկոյ ծեծ ու կոծը կը փրէին տան
մէջ : Գէորգ տեսնելով այս ամեն անյաջո-
ղութիւնները , վճռեց բարբարոս հօր մը
դէմ բարբարոս որդի լինել . այլ եւս
կատաղութեան կրակը վառուեցաւ Գե-
որգի մուայլ աչացը մէջ : Վերջապէս օր
մը Սաշիկ այն անպատիւ կնոջ ձեռքէն
բռնելով բերաւ տուն և իր տան երէցը
կոչելով ուզեց պսակուիլ . բայց երէցը
մերժեց նրա առաջարկութիւնը , և ահա
Սաշիկ աւելի սաստկացուց իր վայրա-
գութիւնը և աններելի ոճիրները . նա
տունէն դուրս վանեց իր զաւակները ո-
րոնց ամենէն մեծն 14 տարեկան աղջիկ
մ'էր :

Այն խորամանկ պոռնիկ կինը հասկը-
ցաւ թէ օր մը Սաշիկ իր սիրոյն զոհ պի-

տի լինի . ուստի անոր տան դրան չէմ
քէն ներս ոտք դրած օրէն սկսաւ առա-
ջարկել որ այդ չէնքը օրինաւոր կերպով
իր վրայ դարձնէ . իսկ եթէ իւր այս ա-
ռաջարկութիւնը չընդունի , անկարելի է
որ իրեն կին դառնայ , այլ այն օրէն կը
թողու գինք ու կը հեռանայ : Ինչպիսի կը
սիրէր այդ բազդախնդիր կիներ և կըցան-
կար անոր հաճելի ըլլալ . ուստի համա-
ձայնեցաւ իւր ունեցած ամբողջ հա-
րստութիւնը Ն . . . ի վրայ դարձնելու ,
այն հարստութիւնը որ չորս որբերու
ժառանգութիւնն էր : Այս լուրը կայ-
ծակի նման Գէորգի ականջը հասաւ .
նա վճռեց որ սպաննէ իւր անիրաւ
հայրը և ըսաւ ինքնիրեն . Պէտք է
մեր արդար իրաւանց սլաշտպանութեան
համար օր մ'առաջ մեռնիմ իրրեւ մարդ ,
քան թէ օր մը վերջ վատութեամբ միեւ-
նոյն վախճանն ունենամ . այն տունը որ
սլոռնկի մը տալ կուզէ հայրս , մեր ժա-
ռանգութիւնն է . եթէ անտարբեր մնամ ,
պիտի թռցնենք զայն մեր ձեռքէ և քոյ-
րերս պիտի մնան փողոցներու մէջ իրրեւ
մուրացկան , անտէր և անսպաշտպան . իմ

կեանքս պիտի կորսնցունեմ, խաւար
բանտերու մէջ պիտի վերջացնեմ երիտա-
սարդութիւնս և ասով պիտի ազատեմ
զանոնք իրենց տաժանական կեանքէ .
աշխարհային կեանքի վայելչութենէ պի-
տի զրկուիմ ես, ապագային երջանկու-
թիւնս պիտի կորսնցնեմ, բայց հոգ չէ .
հայրս կուզէ իմ քոյրերս գերի ընել այն
սլոռնկի, հայրս կուզէ իրեն կին առնուլ
զնա որ իւր զաւակաց հոգին ու մարմինը
մաշեցնէ . բնական է որ խորթ մայրերը
միշտ ատելութեամբ կը վարուին որբերու
հետ, կը հալածեն միշտ. գայլն ու գառը
միասին չեն կարող ապրիլ. ա՛հ, մենք որ
այժմ որբ ենք և միանգամայն անբաղդ,
իցի՛ւ թէ այնպիտի հրէշի մը որդի լինե-
լու անունը չժառանգէինք . ինչ որ նա-
խապէս վճռեցի, պէտք է որ կատարուի .
թող լսէ բոլոր աշխարհ թէ անօրէն հայր
մը իւր պատիժը պիտի ընդունի իր հա-
րազատ զաւակէն :

Այսպէս ահա Պէորդի դատողու-
թեան և զգացմանց մէջ մաքառումը
սկսած էր . բայց նա իր որոշման վը-
րայ կեցած էր, իսկ հայրը չէր գիտեր

և չէր յուսար որ իր որդւոյն վճիռը անդառնալի է : Այս վայրկենին Քէօրգ ամեն ինչ մտաացած էր , հարստութիւն , կեանք , ապագայ , ուսում և գիտութիւն , որոնք մտքէն անդամ չէր անցուներ . նա բոլորովին փոխուած կերպարանք մ'առած էր , նորա դէմքի վրայ նկարուած կերեւէին կատաղի վրդովմունք . ճակատը կնճռուած էր և կրակոտ աչաց բիբերը վայրենի կերպով կը շարժէին իւր թաշօնքերու տակէն : Բաւական չէր որ այն չափ արտասուք կը թափէր , պիտի թափէր նաեւ արիւն , և ահա այն ատեն պիտի վերջանար այդ երկպառակութիւնը :

2

Օձի մահը երբ դայ , ճամբու վրայ կը պառկի , կըսէ առածը :

Աիրակի օր մ'էր : Քէօրգ տուն կուգայ և կը տեսնէ որ իւր վախճանեալ մօր սնտուկները տակնուվրայ ըրած էր այդ անպատիւ կիներ . նա չգտաւ իւր փոքրիկ քոյրերը և եղբայրը իւր հայրենի տան մէջ . նոքա արտաքսուած էին և կը թափառէին փողոցներու մէջ : Երբ Քէօրգ

տեսաւ այս աղետալի տեսարանը , կեցաւ վայրկեան մը լուռ և տխուր կերպարանքով . այս լուռութեան յաջորդեցին նրա դէմքի վրայ սլայծառ արտասուաց կաթիլներ . նա հասկցաւ ամեն բան . այն վայրկեանին հայրը բացակայ էր տունէն , միայն անպատիւ կինը ներկայ էր , որ սրատուհանին մօտ նստած փողոցէն անցնողները կը դիտէր : Գէորգ առանց բառ մ'ուզելու Ն...ին , դուրս ելաւ և գնաց մօրաքրոջը տունը . տեսաւ որ քոյրերը և եղբայրը այնտեղ էին . նոքա հեծկլտալով պատմեցին իրենց հօրը բռնաւորութիւնը և վայրենութիւնը , եկան սաշարեցին Գէորգը և սկսան արտասուք թափել : Այդ ողորմելի և անմեղ արարածոց մին կըսէր . Գէորգ , եղբայրի՛կս , եթէ հայրս անգութ է , կաղաչեմ՝ դու գոնէ գթամեզ : Երկրորդը կըպաղատէր ըսելով . Գուես մեր սաշտպանը : Երրորդը կըսէր . Անգութ հայրս մազերէս բռնելով դուրս նետեց զիս : Իսկ ամենէն փոքրիկը սրտաճմլիկ ձայնով կը ճվար . Անօթի՛ եմ , հա՛ց կուզեմ . և Գէորգի ոտքերուն կը պլլուէր : Գէորգ երբ տեսաւ այս ողբալի կացու-

թիւնը , իր բարկացայտ , երկնադոյն աշ-
քերը սկսան վառուիլ տենդային կրակով .
ամբողջ մարմնով սկսաւ դողալ նա և իր
դէմքի վրայ նշմարուեցաւ մի անսովոր
անհանգստութիւն , կը դողդղային նաեւ
ծնկուրները . մէկ խօսքով այդ տեսարանը
չատ դէչ տպաւորութիւն ըրաւ իր սրտին
վրայ . ա՛լ չկրցաւ զսպել ինքզինքը և եր-
կու ձեռքով բռնեց աշքերը որոցմէ ար-
տասութիւն ջերմ հոսանքով սկսան իջնել
երեսն ի վար : Մի քանի րոպէ խոր լռու-
թիւն տիրեց իրենց մէջ . յետոյ Մաք-
րուհի բռնելով իր եղբօր ձեռքը , ըսաւ .
Ա՛հ , եթէ այսօր չկարենանք համոզել մեր
հայրը , վաղ առաւօտ ամեն բան պիտի
լմնայ : — Ի՞նչ պիտի կարենայ ընել .
դուք անհոգ եղիք , սլատասխանեց Գէորգ :
— Ա՛հ , հաւատա՛ , եղբա՛յր իմ , վաղը հայրս
պիտի երթայ կալուածական սլաշտօնա-
տուներ ու մեր արդար ժառանգութիւնը
այդ կնոջ վրայ պիտի դարձնէ օրինաւոր
կերպով . մենք այնուհետեւ պիտի մնանք
փողոցներու մէջ և թշուառ պիտի լինինք :
Գէորգ իր քրոջ խօսքերը լսելէ յետոյ ,
մի ողորմելի հայեացք ձգեց անոնց

վրայ և ըսաւ . Մեր այս արդար դատաստանը վաղը պիտի տեսնուի ու դուք երեկոյին ամենքդ ալ այդ տանը մէջ պիտի լինիք . պէտք է որ համբերութեամբ ըսպասենք մեր ճակատագրի վախճանին . դուք պէտք է փարատէք այդ կասկածը թէ ուրիշները պիտի յամիշտակեն մեր ժառանգութիւնը . անհոգ եղի՛ք . առ այժմ մնաք բարեաւ , դարձեալ կը տեսնուինք , յարեց Քնորգ և հեռացաւ :

Նայն օրը Նոր թաղի Քաղախան խորհուրդը Սաշիկի տան երէցին հետ գնացին մոլորեալին մօտ , համոզելու համար որ իւր անիրաւ դիտաւորութենէ ետ կենայ . բայց նա կատաղութեամբ կընդդիմախօսէր անոնց ըսելով . ՚Ա՛հ հարստութեանս պատասխանատուն ես եմ՝ միայն . ոչ ոք իրաւունք ունի միջամտելու այս գործին . ես օրինաւոր կերպով ինձ ամուսին պիտի առնեմ Ն...ը և վաղ առաւօտ ըստ օրինի իմ բոլոր հարստութեանս կանոնաւորապէս նա միայն տէր պիտի դառնայ . անկարելի է որ զիս համոզէք : Քահանան տեսնելով որ Սաշիկը պոռնիկ կնոջ մը սիրոյն գերի եղած է , «արիւն ձեր ի գլուխ

ձեր» ըսին և գնացին Գէորգին պատմեցին եղած խօսակցութիւնը :

Գէորգ դարձեալ մնաց խոր մտածութեանց մէջ . յետոյ գնաց Խաչիկի մօտ , վերջին անգամ խրատելու համար զնա : Խաչիկ տանը պարտիզին մէջ գործով կը զբաղէր . Գէորգ մօտենալով հօրը , իմաց տուաւ որ կուզէ վերջին տեսութիւն մը ընել : Խաչիկ խրոխտալի դէմքով մը հարցուց թէ ի՞նչ բանի համար կուզէ տեսակցիլ : Եւ ահա Գէորգ բացաւ բերանը և սկսաւ խօսիլ . Ո՛վ հայր , թէպէտեւ հայր կոչուելու արժանի չես , բայց վերջին անգամ այս անունը տալով , խորհուրդ կուտամ քեզ որ եթէ ամօթալի գործերդ չի թողուս , վիճակդ շատ գէշ պիտի լինի : Խաչիկ լսելով իր որդւոյն նախատալի և միանգամայն բարոյալի խօսքերը , կատաղութեամբ հրամայեց որ դուրս ելնէ տունէն և ուրիշ անգամ չը ներկայանայ : Գէորգ աւելի կատուեցաւ և դարձեալ սկսաւ խօսիլ . Այսպէս ուրեմն բոլորովին կուրանա՞քու հարազատ զաւակները մի պոսնկի սիրոյն համար . ամօթ և նախատինք քեզ . թող այն օրը

սե՛ւ լինէր երբ դու աշխարհ եկար . թող
քո մայրը փոխարէն քեզի մի կտոր քար
ծնած լինէր և ոչ թէ քեզի նման պատիժ
ու պատուհաս . անզգայ և վայրենի կեն-
դանիններն անդամ կը գդուեն և կը պաշտ-
տլանեն իրենց ձագերը , իսկ դու այդ ա-
նասնոց չափ ալ զգացում և սէր չունիս
դէպի զաւակներդ . կատաղի հրէշի մը
նման կը յարձակիս որդւոցդ վրայ և կը
յօշոտես զանոնք . խեղճ մօրս մահուանը
պատճառ դո՛ւ եղար , արիւնարբու դահ-
ճի մը նման գիշեր ցերեկ վայտի և եր-
կաթի հարուածներով հալածեցիր , որ-
պէս զի խոչընդոտ չլինի քու ամօթալի
գործերուդ . վերջապէս յաջողեցար սպան-
նել զնա ու այնպէս զովացուցիր քու դը-
ժօխային սիրտդ . ա՛լ ասկից յետոյ ազատ
ես ամեն կերպ անգթութիւններ գործե-
լու . եթէ մենք քու պատճառովդ զըր-
կուեցանք մեր սիրելի մօրմէ , պէտք է
նաեւ զրկուինք մեր չարասիրտ և եղեւ-
նագործ հօրմէ ալ որուն կենդանութիւ-
նը ասկից յետոյ միշտ վնասակար պիտի
լինի մեզ . դու նախատինք կը բերես մե-
զի քան թէ պատիւ . որչափ որ դու կեն-

դանի լինիս, մեր աչացը արտասուքը երբէք չպիտի ցամքի, միշտ պիտի արտասուենք, միշտ պիտի մաշուինք ու տանջուինք. դու որ սարսափելի մի յանցաւոր ես, պէտք է որ պատժուիս :

Անիրաւ հայրը լռեց իւր որդւոյն ազդու խօսքերուն. նրա ամբողջ մարմնոյ մէջ անցաւ մի ցուրտ սարսուռ և բոպէսական լռութենէ յետոյ ըսաւ. Գու ինձ կանխի՞՞՞նք, Գէն'րգ. կանխի՞՞՞նք հայրդ որքու կենացդ պատճառ եղաւ : — Այո', ուրիշ խօսքերու արժանի չես դու. նա որ իւր կնոջը մահուան պատճառ կը լինի, նա որ կը թողու իր հարազատ զաւակները անպատիւ կնոջ մը սիրոյն համար, նա որ իւր ընտանեացը անունը և պատիւը կարատէ, նա որ իր զաւակացը արդար ժառանգութիւնը օտարներու կը պարգեւէ, արժանի է միայն անէծքի, արժանի է նաեւ մահուան. կանխի՞՞՞նքեզ զաւակներդ որ քու պատճառովդ որբ մնացին, անոնք ալ գքեզ անխի՞՞՞նք իրաւունք ունին վասն զի գիշերային խախուրտքով հեծող բուերու նման փողոցէ անոնք չէ տուն կը թափառին ու փողոց և

տելու հաց մուրալու համար. գիտցիր որ
քու մեռնելէդ վերջն ալ անկէ՞քի արժա-
նի պիտի լինիս. չար մարդու մը չար գոր-
ծերը քանի յիշուին, գրեթէ ամեն ան-
գամ կը հայհոյեն անոր գերեզմանին վրայ,
ահա այս վերջին անգամն է որ քու ան-
բարոյականացած տանդ մէջ կը տեսնեն
զիս վասն զի այլ եւս աստեղծութիւնը,
կիրքը, անբարոյականութիւնը և պոռնկի
մը պիղծ սէրը ցնորեալ վիճակի մէջ ձը-
գած են զքեզ. այդ կիներ դրախտի օձին
նման մոլորեցուց զքեզ, իր թունալից ա-
րիւնովը պատուաստեց քու տկար մար-
մինդ. եթէ այժմ չզղջաս և չզգաստա-
նաս, անդ առնալի է քու կորուստդ և ոչ
ոք պիտի գթայ քեզ: Քէորդի այս խօս-
քերն լսելով մոլորեալի դէմքին վրայ և-
րեւոյց ոչ թէ մարդկային այլ դիւական
մի ժպիտ. վայրկեան մը լուռ կեցաւ նա
և ապա արհամարհական ստունութեամբ
սրտաստիտանեց իւր որդւոյն. Քէորդ,
անկարելի է որ այս որոշումս փոխեմ. ե-
թէ իմ հարստութիւնս ձեր արդար ժա-
ռանգութիւնն է, ուրեմն կարգաւոր
դէմ դատ բանալ և ինձ
ուներդ պաշտ-

պանեւ : Գէորգի մնայլ դէմքի վրայէն
անցաւ մի դառն ժպիտ և ապա շարու-
նակեց . Այո՛, պիտի յաղթեմ քեզ . իմ
մօրս և նորա որբ զաւակացը վրէժը պի-
տի առնեմ քեզնէ , բայց ոչ թէ դատի կո-
չելով գքեզ , այլ Աստուծոյ ինձ նուիրած
այս երկու բազուկներովս : Այս ըսելով
Գէորգ հեռացաւ հօրմէն և փողոցի դու-
ռը ուժդին զարնելով փակեց : Հայրը իր-
րոխտապի դիմօք նայեցաւ որդւոյն ետե-
ւէն և դարձեալ շարունակեց իր աշխա-
տութիւնը :

Գէորգ այն օրը անյայտ եղած էր ,
նա պատրաստութիւն կը տեսնէր վրէժ
լուծելու իր դաւաճան հօրմէն . ոչ ոք
գիտէր թէ ինչ հետեւանք պիտի ունե-
նար այս գործը . գիշերը նա չգարծաւ
իր եղբարցը մօտ . նա գնաց իր բարեկա-
մաց միոյն հիւր եղաւ : Խեղճ երիտասար-
դը սրտի տագնապէն բերանը հացի փըշ-
րանք մ'անգամ չդբաւ , գիշերը անցուց
զառամեալ վիճակի մէջ . միտքը չըջա-
պատեալ էր երեւակայութիւններով , աը-
խուր մնայլը պատած էր նրա դէմքը .
Սերթ ընդ մերթ սրտապատառ հառաչ-

ներ կեւնէին բերնէն . նա անկողնոյ մէջ
ուրուականի մը նման նստած կանիճէր
իր բախտը , մտաբերելով իւր անցեալի
ուրախութիւնները և երջանկութիւնները .
իսկ ներկայի անակնկալ դառն և տխուր
վիճակը կը տանջէր նրա սիրտը . ամբողջ
գիշերը սարսափելի յուզմամբ և զառան-
ցութեամբ անցուց . վերջապէս հոգեստղատ
ինկաւ մահճին վրայ նուաղեալ վիճակի
մէջ : Պէտրգ կընիրհէր դառն հառաչանք-
ներով :

Է

Հետեւեալ աղետալի օրն էր 1882 յու-
լիսի 21 :

Պէտրգ յանկարծ վեր թռաւ անկող-
նէն , կարծելով թէ ժամանակը ուշ է . բայց
դեռ գիշերուան խաւարը կը տիրէր . հա-
զիւ թէ մի քանի վայրկենէն յետոյ ա-
րեւելեան երկնքի վրայ կը նշմարուէին
լուսարացի սլայծառ նշոյլները : Պէտրգ
աճապարանօք փողոց ելաւ և գնաց մի
ուրիշ բարեկամի տունը . անդ փոխեց իւր
վարժարանի զինուորական զգեստները .
փոխանակ այդ վայելուչ և փայլուն ըզ-

դեատներու , նա կը հագնի ցնցոտիներ .
գլուխը կը դնէ մի հնամաշ գլխարկ ի-
տալական ձեւով , ձեռքը կառնու կօշիկ
ներկողի տուփ մը և անմիջապէս կիջնէ
Իսկիւտարի նաւամատոյցը . այդ գոր-
ծիքները նա պատրաստած էր մի քանի
օր առաջ : Նաւամատոյցին վրայ կը գլտ-
նուի բարձր շէնք մը որ սրճարան է . Գէ-
որդ այդ սրճատունը ելնելով պատուհա-
նէն կը դիտէ : Ըստ արեւելեան հաշուի՝
ժամը երեքն էր երբ Խաչիկ իւր բազդա-
խնդիր սիրուհւոյն հետ երեւցաւ հե-
ռուէն : Գէորդ անմիջապէս կը նետուի
չոգենաւը որպէս զի հայրը զինքը տես-
նելով ձերբակալել չտայ . քիչ մը վերջը նո-
քա ալ կը մտնեն չոգենաւ . այդ չոգենա-
ւը Շիրքէթի Խայրիէի 24 թիւն էր : Այս
ժամ վերջը չոգենաւը Պօլսոյ կամուրջին
կը մօտենայ . նախ և առաջ մեր կարծեց-
եալ կօշիկ ներկողը դուրս կը նետուի , ա-
ռանց մարդու մը երես նայելու կը յա-
ռաջանայ դէպի Պօլսոյ կողմը և այնտեղ
ծովային բազնիքի պահակատան մէջ կը
սպասէ անոնց : Մի քանի վայրկենէն
Խաչիկ անպատիւ կնոջ հետ չոգենաւէն

եւնեւում ուրախութեամբ կերթ ային կաւ-
ուածական տաշտօնատեղին , ուր որբե-
րու ժառանգութեանը տէր պիտի լինէր
այդ խարերայ կիւնը : Հագիւ մօտեցած
էին Պէօյիւքտէրէի նաւամատոյցին քով ,
Քէորդ բազմութեան մէջէն եւնեւում իր
հօրը դիմաւորեց . Սաչիկ ճանաչեց իր
որդին և տեսնելով զանի այլակերպ և
փոխուած կերպարանքով , հասկցաւ որ
իւր գլուխը մեծ փորձանք մը պիտի դայ-
նոյն վայրկենին սկսան ծնկուըները դո-
ղալ և անկարող եղաւ քայլ մ'առաջ եր-
թալու . կուզէր բառ մ'արտասանել , բայց
կարծես թէ նոյն ժամայն նրա լեզուն
բռնուած էր . նա որպէս կաթուածահար
մարդ անխմանալի կերպով կը հեկեկար :
Նոյն վայրկենին դաւաճան հօր և անմեղ
որդու մէջ կը տիրէր մի տեսակ բռնա-
դատեալ լռութիւն . երկուքն ալ կը ցան-
կային խօսիլ , բայց կը դժուարանային թէ
ի՞նչ խօսին . թէեւ այդ վերջին վայր-
կենին շատ բան ունէին միմեանց ասե-
լու , բայց անկարելի եղած էր : Մինչ
հայր և որդի սոյն հոգետանջ լռութեան
մէջ էին , Սաչիկ ինքզինքին դալով կու-

զէր խոյս տալ Քէորդէն որպէս մուկը
կատուէ . ցնորեալը հասկցած էր որ իւր
վերջին վայրկեանը հասած է և անդառ-
նալի կերպիւ վճռուած է որ իւր կեանք
վերջանայ, նա դողդոջուն ձայնով մի քա-
նի բառ կարող եղաւ արտասանել իւր
որդւոյն . այդ վերջին խօսքերի մէջ լըս-
ուեցաւ հայրական սրտի դառն կսկիծը
իւր բոլոր հրաբորբոք վշտերով . նա դեռ
կը սիրէր իր որդին , նա դեռ կը խնայէր
որդւոյն . այդ զարհուրելի վայրկենին
նա պատրաստ էր ամեն ինչ տալ , նրա
ամեն առաջարկութիւնները ընդունիլ .
մէկ խօսքով զղջալ և մեղայ գոչել , միայն
թէ առանց արեան կարողանար հաշտուիլ
իւր որդւոյն * հետ : Քէորդ զգաց իւր
սրտին մէջ իւր հօրը բաղձանքը , զգաց
նաեւ նրա զղջումը , բայց վերջապէս Սա-
չիկի մահուան անդառնալի վճիռը տուած
էր նա . Քէորդ կատաղաբար երկու
քայլ ետ քաշուեցաւ ու պատասխա-
նեց իր հօրը . Ա՛չ , ո՛չ , վերջին զղջումդ
անօգուտ է , անմեղ մօրս վրէժխնդիւ
ուրուականը զիս քունիս մէջ հանգիստ չը

Թողուր, նա կը բողոքէ ինծի դէմ որ իւր արդար վրէժը առնեմ քեզնէ: Այս ըսելով Քէորդ մի քայլ եւս ետ դնաց, մեքենաբար աջ կողմի գրպանէն դուրս առաւ բէվօլվէրը և ուղղելով իւր հօր կուրծքին կրակեց. գնտակը կայծակի նման մտաւ նրա սիրտը. նա իսպառ արիւնաքամ եղաւ, թուլացաւ, դողաց և ընկաւ հառաչելով.

— Հայրասպա՛ն . . . Նրա այս խօսքին յաջորդեց յուսաբեկ սրտի և հոգեկան մաքառման դառն լուսթիւնը . . . և այսպէս վերջացաւ հօր և որդւոյ կռիւը:

Այս գործողութենէն վերջը Քէորդ ներկարարի տուփը ցած թողլով և ձեռքերը խաչաձեւ փակելով իւր կուրծքի վրայ, անշարժ մարմարեայ արձանի պէս անվեհեր կանգնած մի քանի բոսլէ լուռ կը նայէր արեան մէջ թաւալող հօրը վերայ. յետոյ սրբեց աչացը արտօսքը ու հեռացաւ. խելագարի նման չէր գիտեր դէպի ո՞ր կողմ երթալ: Սա կէտը զարմանալի է որ այս եղեւթեան միջոցին այնչափ բազմութենէն ոչ ոք տեսաւ ոճրագործին ո՛վ ըլլալը: Նոյն ատեն մի խումբ

ոստիկաններ վրայ հասնելով ձերբակալեցին մի ուրիշ անձ, հայրասպանը տեսնելով հեռուէն այդ սխալ ձերբակալութիւնը, նա վատութիւն սեպեց իրեն փախչիլ և կամ ուրանալ, անմիջապէս եկաւ ոստիկանապետին և ըսաւ. Նս եմ մարդասպանը, բռնեցէ՛ք զիս և տարէք կառափնարան: Իսկոյն ձերբակալեցին Քէորդը. իսկ անդուժ ոստիկանք անձնատուր եղող յանցաւոր մը իրենց հրացանակոթերու հարուածներով կը տանէին դէպի դատասպարտութեան օթեւանը: Մէկ ժամ վերջը Պօլսոյ կեդրոնական բանտի մահապարտներու յատկացեալ ամենախոր քարեղէն սենեկի միոյն մէջ դըրուած էր Քէորդ, ձեռքերը և ոտքերը ամուր շղթաներով կաշկանդուած:

Խաչիկի դիակը Պօլսոյ քաղաքապետական բժիշկը քննելէ յետոյ փոխադրեցին Պալըխլըյի գերեզմանատունը և յանձնեցին իւր մօրը . . . նրա բարեկամները և ազգականները երբ իմացան եղելութիւնը, ո՛չ ողորմիս կուտային և ո՛չ ալ կը հայհոյէին, միայն սապէս կըսէին. «Խաչիկ շատ լաւ մարդ էր, Աստուծոյ ո-

դորմութիւնը թող նապաստակի նման
նրա գերեզմանի վրայէն թաշի» : Պալով
և . . . ի , նա արդէն անհետացած էր Սա-
չիկի սպաննուած վայրկենին . հառավա-
րութիւնը սկսաւ փնտռել զնա . երկար
ատեն շտեմնուեցաւ նա . բայց մի քանի
ամիս վերջը նորէն երեւան ելաւ . այս ան-
գամ իւր բնակութիւնը հաստատած էր
Բերա Նէնիշէհիրի բողանոցներու միոյն
մէջ . անբաղդը . . . դարձեալ իւր նախկին
արհեստը ձեռք առած էր . իսկ Պէորդի
քոյրերը , ինչպէս նա իւր վերջին տեսակ-
ցութեան մէջ ըսած էր թէ միայն իրենք
տէր պիտի լինին այդ տանը , այնպէս ալ
եղան . ոչ ոք մեղադրեց Պէորդը իր գոր-
ծած ոճրագործութեան մասին . ով որ
լսեց , « Սաչիկ արժանի էր մահուան »
կրտէր , և եթէ այնպէս շվարուեր Պէորդ
իւր անիրաւ հօրը դէմ , գուցէ օր մը նրա
որբ զաւակները յետին թշուառութեան
մէջ ինկած սոսկալի ապագայ մը պիտի
ունենային . հայր մը պէտք չէ որ իր զա-
ւակաց այդպիսի բարբարոսութիւններ ա-
նէ անխղճարար . հայր մը պէտք է որ սէր
և դուժ ունենայ իր զաւակացը վրայ .

խիկ երբ այսպէս մեղանչէ Աստուծոյ և բնական օրինաց դէմ, երբ իւր սրտէն բոլորովին կը հեռացունէ Աստուծոյ երկնազը և իրրեւ գիշակեր գազան իր զաւակաց արիւնը կը խմէ, այսպիսի դառն և սոսկալի հետեւանաց շարժառիթ կը դառնայ : Խաչիկ իր անխոհեմութեամբ մի այսպիսի դատապարտելի մահուամբ կեանքը վերջացունելէ յետոյ, իր հարստ զատ որդւոյն հայրասպան անունը ժառանգելու սլ պատճառ եղաւ : Աւրեմն այնպիսեաց յիշատակը ամեն անգամ թող անէ՞՞քով յիշուի :

Ը

Այն աղետալի եղելութենէն անցած էր ճիշդ երկու ամիս . Գէորգ առաջին անգամ եղեռնական ատենին առջեւ հարցաքննուեցաւ . ընդհանուր դատախազն էր քրիստոնէից թշնամի թուրք մը, Տիզա պէյ անուն . մեր հայազգի առաջնակարգ փաստաբաններէն Մեծ. Գրիգոր էֆէնտի Զօհրապ յանձն առաւ ձրիապէս պաշտպանել Գէորգի դատը և մինչեւ ցայսօր կը մաքառի Գէորգը ազատելու

համար : Խաչիկի արիւնը ոչ ոք կը պահանջէր իւր որդիէն , բայց եղեւնադատատեանը ամեն անգամ մահուան կը դատապարտէր յանցաւորը . առաջին անգամ երբ մահուան վճիռը տրուեցաւ ամբաստանեալին , նրա պաշտպանը վերաքննիչատենին դիմեց : Այո՛ , Քէորդ յանցաւոր է և արժանի է պատժոյ , բայց արժանի չէ մահուան , կալաղակէր Պ . Զօհրապ , փաստեր և օրինադրքէն յօդուածներցոյց տալով . բայց պէտք է գիտնալ որ Հայոցս համար արդարութիւն և իրաւունք չկայ Տաճկաստանի մէջ . կեանքիս մէջ չտեսայ դոնէ մի անգամ որ Հայ մը խնդումերես դուրս ելնէ դատարանէ մը . միշտ Հայն է պարտականը և միշտ Հայն է արժանի պատժոյ և տուգանաց . մենք ամեն անգամ անարժան ենք արդարութեան վասն զի արդարութիւնը զօրութեան հետ միացած է . այն ազգը և այն մարդը որ զօրաւոր չէ , արդար ալ չէ և ուր որ երթայ , չէ կարող պաշտպանել իւր իրաւունքը :

1883ին Պօլիս կը գտնուէի . յանկարծ միտքս եկաւ իմ անբաղդ ընկերը . շատ

փափաք ունէի վերջին անգամ տեսնել
զնա մխիթարելու համար . մի քանի բա-
րեկամացս հարցուցի իմանալու համար
թէ ո՞ր ատեն թոյլտուութիւն կը լինի
այդ կարգի բանտարկեալներուն այցելու-
թիւն տալու . տեղեկացայ որ ուրբաթ
օրերը միայն կը լինի այդ թոյլտուութիւն .
Հետեւեալ օրը որ ուրբաթ էր , ես գացի
կեդրոնական բանտը որ Մէթատէրհանէ կը
կոչուի . նախ բանտապետի սենեակը մը-
տայ ուր մէկ հրամանագիր տուին ինձ .
մի ուրիշ պաշտօնեայ ոտքէս մինչեւ գը-
լուխ խուզարկեց որ մի՛ գուցէ զէնք ,
նամակ և այդպիսի վտանգաւոր բաներ
գտնուին իմ վրայ . Այս գործողութիւն-
ները վերջանալէ յետոյ , ինձ առաջնորդեց
մի ծերունի թուրք պաշտօնեայ որ Թօմ-
րուք աղասի կը կոչուի . հրամայեց որ ե-
տեւէն երթամ . նա ձեռացը մէջ ունէր
բազմաթիւ ծանր երկաթեայ բանալիներ .
ես հետեւեցայ նրան . ծերունին ուրա-
խութեամբ կառաջնորդէր ինձ , կարծես
թէ ցոյց տալու համար իմ սիրելոյ ան-
յայտ գերեզմանը . մենք մտանք գետնի
խորութեան մէջ . նախ երկաթէ ծանր դուռ

մը ճանչալով բացուեցաւ և ապառաժ-
եայ քարակոփ տասը աստիճան սանդուխ-
ներէ դէպի վար իջանք . մի երկաթեայ
դուռ եւս բացուեցաւ . երկու վայրկենէն
մենք մտանք բանտարկեալի քարեղէն
վանդակը . սլաշտօնեայն ինձ ցոյց տուաւ
Պէորգը և հեռացաւ . երկաթեայ դուռը
կրկին փակուեցաւ և ես մնացի միայնակ
այդ քարեղէն նկուզի մէջ : Յառաջանա-
լով դէպի բանտարկեալը , տեսայ որ նա
փոքրիկ սենեկի մը մէջ յարդեայ անկող-
նոյ վրայ նստած , ձեռքը ձեռտին դրած
կը մտածէր . խեղճը բոլորովին կերպա-
բանափոխուած էր . սաստիկ նիհարցած ,
մօրուսն երկարցած ու խառն ի խուսն
մազերը եռասպատիկ հաստացած կեղտն ,
նրա վարդագոյն թշերը դեղնած ու թոշ-
նած էին , մարմինը ցնցոտիներու մէջ
փաթաթուած , ոտքերը բարիկ և շղթա-
յակապ , արեւու նշոյլը հազիւ ներս կը
թափանցէր այդ սենեկի նեղ լուսամուտ-
ներէն . երբ ես դրան մէջ երեւեցայ , նա
վեր թռաւ նստած տեղէն , խոնջած ա-
չերը յառեց դէպի ինձ , բոպէ մը կեցաւ
լուս և դարձեալ հայեացք մը թողուց

խմ վրայ ու հեծկլտալով անունս արտա-
սանեց . ես մօտեցայ նրան , չի կրցայ ինք-
զինքս զսպել և սկսայ ես ալ հեծկլտալ ,
և այսպէս մի քանի վայրկեան մենք մը-
նացինք լուռ դրկախառնութեան մէջ ...
յետոյ բաժնուեցանք , բռնեցի նորա ձեռ-
քէն ու նստանք յարդեայ անկողնոյն վը-
րայ . նա չի կրցաւ բռն մ'արտասանել ,
միայն թէ ձեռքը տարաւ դէպի կնճիռ-
ներով պատած ճակատը . մէկ կողմ ըրաւ
մազերու խիտ դէզը և ապա յարեց սրբ-
տառու ձայնով . — Ա՛հ , սիրելի՛ բարե-
կամս , այդ համբոյրներդ չեն թեթեւ-
ցըներ իմ շղթաներու ծանրութիւնը . կը
յուսայի՞ր որ այս ցաւալի վիճակի մէջ պի-
տի տեսնես քու հաւատարիմ ընկերդ .
թող տուր որ թափեմ իմ զայրացած սրտիս
դառնութիւնը . ասեցին զիս ամեն բա-
րեկամներս . ամենքը թողուցին զիս ան-
տէր և անմխիթար ու դու միայն կը սի-
րես և զեր զիս , դու միայն հաւատարիմ
մնալով ինձ , զիս երջանիկ ընելու համար
եկար հոս : Այսպէս ըսելով նա բռնեց
դողդողալով իմ երկու ձեռքերս և սկսաւ
իւր ջերմ արտասուքով թրջել : — Մի

յուսահատիր , բարեկամ , Աստուած բարի է . թէպէտ սրտառուչ է ներկայ վիճակդ , սեւ է ճակատագիրդ , բայց պիտի գայ օր մը որ դարձեալ պիտի ազատիս այս բանտէն . Համբերութիւնը յաղթող է : Երբ այս մխիթարիչ խօսքերը կարտասանէի , նա ամբողջ մարմնովն կը դողար որպէս մի եղեռնագործ և դեռ կը մաքառէր իր սրտի և զգացմունքներու հետ : Բաւական խօսակցելէս յետոյ ըսի իրեն . Գէո'րգ , պէտք չէր որ դու հրապարակի վրայ , այն խուռն բազմութեան մէջ գործէիր հօրդ սպանութեան գործողութիւնը . Եթէ վճիռդ անդառնալի էր , դու կարող էիր զնա սպանանել իր տանը մէջ և յետոյ փախչիլ կեանքդ ազատելու համար : Իմ այս խօսքերուս վերայ նա դարձաւ և պատասխանեց ինձ . Ո՛չ , ո՛չ , սիրելի բարեկամս , ես երբէք չէի ցանկանար փախստականի անուն ժառանգել . ատի վատութիւն սեպեցի . բայց կայ մի էակ որ ամենուս Տէրն է , ահա ես Անոր վրայ դրած եմ յոյս . աւելի մեծ յօժարութեամբ կընդունիմ մահը և ինձ հետ գերեզման կը տանիմ իմ

սլատիւը. ուրեմն ի՞նչը ձգեց զիս այս
թշուառ դրութեան մէջ. արդեօք վրէժ-
խնդրութեան անզուսպ կի՞րքը, արդ-
եօք արեան անչէջ ծարա՞ւը. ո՛չ երբէք.
ես եթէ հայրաստան անունը ժառանգե-
ցի, իմ ողորմելի որբ և անմեղ քոյրերու
և եղբօրս ապագային բարելաւութեան
համար ըրի այդ. ա՛հ, այն օրը երբ տե-
սայ զանոնք որ հայրենի տունէն արտաք-
սուած փողոցներու մէջ կը թափառին ող-
բադին, ահա այն վայրկենին ատեցի
կեանքը և սիրեցի մահը ու տառապան-
քը և վերջապէս լուծեցի այդ անմեղներու
վրէժը... : Յանկարծ նա ուժաթափ ե-
ղաւ. նա չունէր այնքան սրտի զօրու-
թիւն որ կարողանար զսպել իւր հոգւոյ
ամենադառն զգացմունքները դարձ-
եալ սկսաւ արտասուքը հոսիլ նրա աչ-
քերէն, դարձեալ զգացմանց կատաղի
մրրիկը սկսաւ ալեկոծել նրա փլած սիր-
տը. այդ խռովութեան մէջ երկար ա-
տեն կը տանջուէր նա մինչեւ որ խելա-
գարի նման ձեռքը տարաւ դէպի բոր-
բոքուած ճակատը և դողդոջուն ձայնով
արտասանեց. Ա՛հ, ալ եւս յաւիտեան

կորսուած եմ . այս գայլերու ճիրաննե-
րու տակ ինկած մնացեր եմ անաէր . ո՛չ
ազգը , ո՛չ Պատրիարքը կը պաշտպանէ
զիս , բաց ի իմ բարի և մարդասէր փաս-
տարանէս որ իւր հոգին ու մարմինը կը
մաշեցնէ զիս պաշտպանելու և ազատելու
համար . նա է միայն որ կը գթայ ինձ .
չատ առաքինի անձ է . եթէ նա իմ դատու
չպաշտպաներ , մինչեւ հիմա Թուրքերը
կախազան քաշած էին զիս . կըսեն թէ
Թուրքերը գթասիրտ են և ես ալ այնպէս
կարծելով խոստովանեցայ ճշմարտութիւ-
նը , բայց յետոյ շատ զղջացի :

Բարեկամիս այս խօսքերը ևս ընդմի-
ջելով ըսի . Յիրաւի սխալած ես դու ,
Գէորգ . սոխին անուշը չըլլար . Թրքաց
մարդարէն այնպէս սովրեցուցած է
որ իւր յաջորդները միշտ հալածեն քը-
րիստոնեայները , անոնց ազօթատեղի-
ները հիմնայատակ կործանեն , հարըս-
տահարեն զանոնք , բռնաբարելով կոյ-
սերու պատիւը ընդունել տան անոնց
բռնու թեամբ Մուհամմէտի պիղծ կրօնքը ,
վերջապէս հազարաւոր անազնիւ միջոց-
ներ գործադրելով , յաջողին յաղթել ա-

մեն անոնց որոնք տկար և անպաշտպան
արարածներ են աշխարհի վրայ . . . նոքա
համոզուած են թէ երբ այս ընթացքը
բռնեն , այսինքն բարբարոսութիւններ
գործեն , պիտի կարողանան տիրել ամ-
բողջ աշխարհի . բայց չեն գիտեր որ ընդ .
հակառակը պիտի գայ օր մը որ Թրքաց
գահը և թագաւորութիւնը կործանուե-
լով հազիւ կարող պիտի լինին գտնել Ա-
րարիոյ խորերուն մէջ մի քանի փարսախ
հող բնակելու համար . այո՛ , պիտի գայ
օր մը որ Թուրքը պիտի յիշէ իւր անց-
եալը , պիտի ըսէ ինքնին թէ ես ալ զօ-
րաւ որ ազգ մ'էի ժամանակաւ , իսկ այ-
սօր վայրենի արաբացւոց մի անզօր իշ-
խան : Տա՛ր երկինք որ այդ օրը շուտ
հասնէր , որ մենք ալ ցամքած աչերով
տեսնէինք նրա կործանումն և մեր ա-
կանջներով լսէինք անոնց ողբը . ինչպէս
որ Թրքաց արչաւանքները դէպի Սրե-
ւելք բարբարոսութեամբ սկսան , իւր այդ
բարբարոսութիւնը նոյն իսկ պատճառ
պիտի դառնայ կործանելու նրա մահա-
մերձ թագաւորութիւնն ալ : Իմ այս ար-
գարացի խօսքերս լսեց բանտարկեալն և

դառն կերպիւ շարժեց գլուխը և իւր
շղթ աներու շառաչիւնը արձագանք տը-
ւաւ իր սրտի բարկութեանը . յանկարծ
նա նստած տեղէն վեր թռաւ . սիրտը
լեցուած էր արդար վրէժխնդրութեամբ .
բայց թշուառը ազատ չէր , վասն զի նրա
ոտքերը կաշկանդած էին ամուր շղթա-
ներով . մի քանի վայրկենէն դադրեցաւ
բարկութիւնը . դարձեալ նա նստաւ
յարդեայ անկողնոյն վրայ . ես իւր ցա-
ւերը մոռցնելու համար տուի ծխախոտի
տուփը և սկսանք հանդարտօրէն խօսիլ
անցած աղետիցը վրայ . ես միշտ կը մխի-
թարէի զինքը և իր ազատութեանը վրայ
կը խօսէի . իմ արտասանած խօսքերովս
նրա տխուր դէմքը փայլեցաւ սաստիկ
ուրախութեամբ և բանտի սենեկին ջեր-
մութենէն քրտանց մի քանի մարդարխո-
ներ տեսնուեցան նրա դալկահար ճակ-
տին վրայ : Աս պատրաստուեցայ մեկնե-
լու , նա բռնեց ձեռքերէս ու տխուր ժը-
պիտով մը նստեցուց զիս . յետոյ իւր ան-
կողնոյ տակէն մի տետրակ դուրս ա-
ռաւ և տուաւ ինձ : ես ժպտելով կար-
դացի տետրին ճակատը ուր սա խորհր-

դաւոր բառերը նշանակուած էին «Հայ-
րասպանի Յիշատակարանը» : Գէորգ այն
աղետալի օրէն սկսեալ մինչեւ այդ օրը
իր թշուառ կեանքը նկարագրած էր այդ
տետրի մէջ : Ըսի իրեն թէ պէտք է որ
չարունակէք այդ գրուածքը մինչեւ ձեր
ազատման օրը . միայն թէ քեզի պէտք է
գլխաւոր երկու բան , առաջինը համբե-
րութիւն և երկրորդը գերմարդկային
արիութիւն :

Մինչդեռ մենք այս խօսակցութիւնը
կընէինք , երկաթեայ դուռը ահռելի գո-
ռումով բացուեցաւ . երկու վայրկեանէն
յետոյ ծերունի պաշտօնեայն երեւցաւ
դրան շէմքին վրայ և հրամայեց որ բաժ-
նուիմ . ես ելայ օտքի վրայ , վերջին ան-
գամ համբուրեցի տարաբաղդ ընկերիս
դեղնադոյն շրթունքները և հեռացայ :
Նա բարձրաձայն աղաղակեց ետեւէս .
«Մի՛ մոռանար զիս . կեանքիդ մէջ յիշէ՛
միշտ քու հայրասպան ընկերդ» :

Թ

Անցած էր վեց ամիս մեր տեսութեան
օրէն , եղեւնադատ տառանը Գէորգի

մահուան վճիռը տուաւ . ընդհանուր
դատարանացը զրկեց մի գործակատար
սլաշտօնեայ բանտարկեալին մօտ , վճռա-
գիրը իրեն կարգալու համար : Բանտա-
պետը կը բերէ Պէորգը այցելութեան
սենեակը . գործակատար սլաշտօնեայն
վճռագիրը կարգալէ յետոյ , իմաց կու-
տայ դատապարտեալին թէ մի միայն
Սուլթանը կարող է բարեփոխել այս վը-
ճիռը , այսինքն պէտք է որ Սուլթանի
աղերսագիր մը մատուցուի Պէորգի կող-
մէ , որպէս զի կեանքը իրեն շնորհուելով
դատապարտուի միայն 10 կամ 15 տարի
բանտարկութեան : Գուժարեր ճիւղազը
իւր պարտքը կատարելէ յետոյ կը հեռա-
նայ , իսկ Պէորգ յուսահատեալ կը մտնէ
դարձեալ իր քարեղէն վանդակը և կը
սկսի մտածել , նոյն օրը սաստիկ անհան-
գըստութեան մէջ կը մնայ . երեկոյին իր
ցաւերը մոռնալու համար կը մտնէ ան-
կոյին , բայց հազիւ թէ կէս ժամի չափ
խաղաղ կը քնանայ , շուտ կը խանգար-
ուի այդ խաղաղութիւնը , նա յանկարծ
ոգեստղառ և սարսափահար վեր կը թռչի
անկողնէն և այդ չարաշուք սենեկին եր-

կայնու թեամբն երթալով դալով ցնորեալ
վիճակի մէջ կսկսի ինքնախօսութիւն ա-
նել սապէս . Ահ , ա՛լ եւս յոյս չունիմ
կեանքէս , կորստեանս ժամը եկել հասել
է , այս ի՛նչ տաժանելի վիճակի մէջ կը
դռնուիմ , գիշերները քունիս մէջ ան-
գամ կը մաքառիմ իմ անիրաւ հօրս ուր-
ուականին հետ որ իւր արիւնլուայ ձեռ-
քերովը կուզէ խեղդամահ անել զիս . ա-
յո՛ , գիտեմ որ ես մեղաւոր եմ , բայց
միայն իմ Աստուծոյս առջեւ . հայրս ինձ-
նէ աւելի մեղաւոր էր , նրա ուրուականը
իրաւունք չունի զիս հալածելու . նա ի-
րաւունք չունի ինձնէ իւր արիւնը սլա-
հանջելու , վասն զի նա արժանի էր մահ-
ուան : Այս ըսաւ խեղճ ցնորեալը և դը-
նաց վհատեալ ու նուաղեալ ինկաւ յարդ-
եայ անկողնոյն վրայ , վիզը ծռեց , ծնօտն
մաշուած կուրծքին վրայ ինկաւ , մի քա-
նի վայրկեան անշարժ մնաց այդ յուսա-
հատութեան մէջ և յետոյ որպէս ի քնոյ
զարթուցեալ , ելաւ կանգնեցաւ ու դար-
ձեալ շարունակեց իւր մենախօսու-
թիւնն . — Ուրեմն զիս օրիտի սպաննե՞ն .

ս'վ անօրէն դատաւորք , միթէ՞ դուք
չունիք մարդասիրութեան զգացում ,
միթէ՞ դուք արդարութիւնը ոտնակոխ
ընելով կը կարծէք թէ հաճոյք մը պիտի
զգաք իմ մահուամբս . . . բայց քանի որ
վճռած էք , պէտք է կատարուի ձեր
կամքը . ոչինչ չեմ կարող անել . ազատ
չեմ ես և իմ արդար ձայնս այս երկաթէ
դռներէն դուրս հանելու գիւրութիւն
չունիմ , չեմ կարող օգնութիւն և գթու-
թիւն աղաղակել , չեմ կարող իբրեւ ա-
զատ մարդ հրասարակաւ բողոքել ձեր
անիրաւ վճռոյն դէմ :

Նւ իւր վերջին խօսքերը արտասանե-
լու միջոցին , նրա ամուր ձայնը դողդը-
ղաց , դողդղացին նաեւ իր նիհար ծընկ-
ուըները , երկու ձեռքով բռնեց աչքերը
և արտասուքը ջերմ հոսանքով կը թրջէր
դժբախդ երիտասարդի շղթայակապ ձեռ-
քերը : Անցած էր արդէն կէս գիշերը ,
նա դարձեալ մտաւ անկողին և սգալու-
տած վերմակը քաշեց գլխուն , քնացաւ :

Գիշերուան խաղաղ լուութիւնը տի-
րեց այդ ահաւոր , այլանդակ և խուար
սենեկին մէջ :

Հետեւեալ առաւօտ բանտապետը , ըստ ամենօրեայ սովորութեան , ծանր բանալիները բարակ շղթայով մը մէջքէն կախած , մարդասպաններու մասնաւոր սենեակները սկսաւ այցելել տեսնելու համար թէ չըլլայ որ բանտարկեալները իրենց շղթաները կօտրելով փախչելու փորձ ընեն : Ամէն երկրի բանտերու մէջ այս օրէնքը կայ արդէն . բանտապետը սարտի ամեն առաւօտ աչքէ անցունել բանտարկեալները , զատ զատ անոնց շղթաները քննելով : Նոյն առաւօտ եւս բանտապետը իր պաշտօնը կարգաւ կատարելով , քիչ մը վերջը Գէորգի սենեկին երկաթեայ դուռն ալ բացուեցաւ . բանտապետը ներս մտնելով նախ և առաջ նրա շղթաները աչքէ անցուց և մի քանի բառ արտասանեց . անգութ պաշտօնեայն այս առաւօտ բոլորովին փոխուած տեսաւ զԳէորգ . նրա երկայն մազերը խառն ի խուռն ոլորուած և դէպի վեր տնկուած էին , մէկ մաս մ'ալ ճակտին վրայ ցցած , աչքերը կատղած հրէշի աչացը սէս կը վառուէին , դէմքը մազաղաթի դոյն էր ստացել : Բանտարկեալը արհամարհական

կերպով նայուածք մը թողուց բանտա-
պետին վրայ և նրա հարցմանցը ոչինչ
չպատասխանեց . բանտապետը տեսնե-
լով որ իւր հարցմանցը պատասխան
չառներ , երկրորդ անգամ աւելի ըս-
պառնական կերպով հարցուց և մի քա-
նի խարազանի հարուածներ տուաւ խեղ-
ճի մերկ մարմնոյն . նա դարձեալ չպա-
տասխանեց և որպէս մի այլանդակ հրէշ
լի ամենայն զարհուրանքով ելաւ կանգ-
նեցաւ . բոպէական լուսթենէ յետոյ իւր
շղթաներով յարձակեցաւ բանտապետին
վրայ և սպառնակից նայուածք մը թո-
ղուց նրա վրայ . բանտապետը սարսա-
փելով նրա այդ ահարկու նայուածքէն ,
հեռացաւ այս անգամ առանց մի բառ
արտասանելու :

Գէորգ ցնորած էր . . .

Քիչ մը վերջը բանտապետը վերստին
եկաւ , այս անգամ իւր օգնականներով
մէկտեղ . կաշկանդեցին Գէորգը ամուր
շղթաներով . նա անդադար կաղաղակէր ,
նրա կատաղութիւնը կը նմանէր ճիշդ ա-
ռիւծի կատաղութեան , նրա բերանը ծա-
րաւէ և անօթութենէ փրփրած , աչ-

քերը մթնապատած, կուզէր ջախջախել
իւր դէմ ելնողներու գլուխը. եթէ ա-
զատ լինէր նա, այդ վիճակի մէջ շատ
բաներ կարող էր անելու. կարծես թէ
գոմէշի ոյժ էր առած. երբեմն գլուխը
երկաթէ դրան և բանտի քարերուն զար-
նելով «Արդարութի՛ւն, արդարութի՛ւն»
կաղաղակէր: Բանտապետը տեսնելով որ
ա՛լ անկարելի է Քէորդը թողուլ բանտի
մէջ, արձակեց իւր շղթաներէն և փո-
խադրեցին Թօփ-թաշի յիմարանոցը: Ե-
ղեռնական ատենին որոշմամբը տեղեկու-
թիւն ուղուեցաւ յիմարանոցի բժշկապե-
տէն թէ Քէորդ յիրաւի ուղեղի հիւան-
դութիւն ունի՞ թէ ոչ. քրիստոնէից այդ
թշնամիք կը կարծէին թէ Քէորդ ինք-
զինքը իրրեւ խենթ կը ձեւացնէ որպէս
զի կարենայ մահուան պատժէն ազատիլ:
Յիմարանոցի բժշկապետն էր հայազգի
Տօքթէօր Մանուկ Աղասեան որ այս մա-
սին պաշտօնական գրութիւնը ընդունելէ
յետոյ, իւր երկու օգնական բժշկաց հետ
երկար խորհրդակցութիւն (consultation)
մ'ըրաւ հիւանդին վրայ և անմիջապէս
տեղեկագիրը մատուցին ընդհանուր դա-

տախազին . այդ պաշտօնական տեղեկագրի մէջ ըսուած էր թէ Քէորգի հիւանդութիւնը ոչ միայն կեղծ չէ , այսինքն simulant չէ , այլ և ծանր է և թէ այս հիւանդութիւնը դարմանուելու համար երկար ատենի պէտք ունի : Ընդհանուր դատախազ Րիզա պէյը Տօքթէօր Աղասեանի տեղեկագրին չվստահեցաւ վասն զի հիւանդը և քննիչ բժշկապետը միեւնոյն ազգէ և կրօնէ էին , այս պատճառաւ անհաւատալի թուեցաւ իրեն այդ տեղեկագրի ստուգութիւնը : Րիզա պէյ ժողովին յայտնելով իր այս կարծիքը , որոշուեցաւ որ վերաքննուի Քէորգի հիւանդութիւնը և այս անգամ քննութիւնը յանձնուեցաւ թուրք բժիշկներու : Աւերաքննիչ ընտրեցին երեք թուրք բժիշկներ որոնք կարող չէին թեթեւ հիւանդի մը լուծողական դեղ մ'անգամ տալ , ո՛ւր մնաց որ այնպիսի ծանր հիւանդութեան մը վրայ խորհրդակցէին և անսխալ կերպով որոշում տային : Նախ և առաջ պէտք է գիտնալ որ մարդ յիմարանոցի բժիշկ ըլլալու համար , այդ բարձր ուսումը Ներսպիոյ բժշկական ա-

կադէմիայի մէջ ուսանելէ յետոյ, երկար
տարիներ ալ մասնաւոր յիմարանոցներու
մէջ փորձառութիւն պիտի ունենայ .
և ահա այնպէս կը լինի մասնադէտ բժիշկ
յիմարներու համար ւ Տօքթ. Մանուկ պէյ
Սղասեան այս վերջիններէն էր . իսկ թուրք
բժիշկները Վ. Պօլսոյ բժշկական վարժա-
րանի մէջ առած էին իրենց ուսումը և
հազիւ կարող էին դարմանել փոքրիկ
հիւանդութիւններ . Վերջապէս օր մը այդ
թիւրք բժիշկներ առանց իմացնելու բը-
ժշկապետին յանկարծ գնացին յիմարա-
նոց Գէորգը տեսնելու : Երբ մօտեցան
Գէորգի մահճակալին, նա երեւակայա-
կան կատաղութեան և երազական ցնորք-
ներու մէջ ինկաւ . խեղճը կարծեց թէ
այդ զինուորական մարդիկ եկած էին
զինքը տանելու դէպի գլխատման բեմը .
երբեմն իւր սպառնական նայուածքով
հերոսի նման կուզէր յարձակիլ անոնց
վրայ, երբեմն ալ կատաղութիւնը դադ-
րեցնելով կը սպառատէր որ երիտասար-
դութեանը վրայ գթան և կեանքը նը-
ւիրեն իրեն, և ահա որպէս մի խելագար
իւր հիւանդութեան ամեն ճշմարիտ

յատկութիւններովն կըտառապէր թշուա-
ռը : Վերաքննիչ բժիշկները առանց բան
մը հասկնալու հեռացան և նրա հիւան-
դութեան տեղեկագիրը մատուցին բոլո-
րովին հակառակ հայ բժշկապետի առա-
ջին տեղեկագրոյն : Մի քանի օր վերջը
Տօքթէօր Աղասեան անոնց սխալ տեղե-
կագրի մի պատճէնը ձեռք անցունելով
անմիջապէս մի բողոքագիր տուաւ եղեռ-
նադատ ատենի ընդհանուր դատախա-
զին և խնդրեց որ եւրոպացի հմուտ բը-
ժիշկներէ մի քննիչ մասնախումբ կազ-
մուի ճշմարտութիւնը երեւան հանելու
համար . այդ բժիշկները պէտք է ընտ-
րուին ընդհանուր դատախազի կողմանէ
և իր ներկայութեամբ քննուի Քէօրզը
և եթէ իրենք կողմնակցութեամբ ի նը-
պաստ Քէօրզի տուած են առաջին տե-
ղեկագիրը , այն ատեն Տօքթէօր Աղասե-
ան յանձն պիտի առնու ըստ օրինի
պատժուիլ դատարանի առջեւ . իսկ եթէ
թուրք բժիշկներն հայ բժիշկներուն հար-
ուածելու համար տուած են հակառակ
տեղեկագիր , այն ատեն նոցա տգէտ և
անփորձ մարդիկ ըլլալը հրասպարակաւ

ախտի հրատարակէ : Ընդհանուր դատա-
խազը Տէօքթ. Մանուկ Աղասեանի իրա-
ւացի առաջարկութիւնն ընդունելով,
Բերայի գերմանական հիւանդանոցի բը-
ժշկապետ Տօքթ. Միւլիքը և ուրիշ եր-
կու գաղղիացի բժիշկներ կանչեց որոնք
խմբովին գնացին յիմարանոց Քէորզը
տեսնելու . անդ ներկայ էր ընդհանուր
դատախազ Րիզա պէյը իւր օգնականի
հետ . իսկ թուրք բժիշկները մերժած էին
ներկայ գտնուիլ, այլ և այլ սլատճառ-
ներ ցոյց տալով :

Յւրոպացի բժիշկները մէկ ժամէ աւե-
լի խորհրդակցութիւն ըրին հիւանդին
վրայ : Տօքթ. Պէռնար, խենթերու հա-
մար երեւելի մասնագէտ բժիշկը, նախա-
պէս իւր կարծիքը յայտնեց ընդհանուր
դատախազին և յետոյ Տօքթ. Աղասեանէ
ուզեց իւր տեղեկագրի սլատճէնը : Այս
միջոցին Րիզա պէյ առաջին սլաչտօնական
տեղեկագիրը օգնականէն առնելով ցոյց
տուաւ . Տօքթ. Պէրնար մեքենարար դըր-
պանէն ակնոցը դուրս առնելով զետեղեց
քթին վրայ և կարգաց . մի քանի վայր-
կեան լուռ կեցաւ և յետոյ դառնալով

ընդհանուր դատախազին ըսաւ . Ն[թ]է այս տեղեկագրի վրայ կասկածելով հաւատարմութիւն չէք ունեցած , մեր կողմանէ տրուելիք տեղեկագրին ալ չպիտի հաւատաք , վասն զի մեր կարծիքն ալ Տօքթ. Աղասեանի տուած տեղեկագրի մի սրտովնը պիտի լինի . [թ]է և անձամբ չեմ ճանաչեր այն բժիշկները որոնք ուզած են պարծենկոտութեամբ զիրենք Տօքթ. Աղասեանէ աւելի մասնագէտ ցոյց տալ , Ձեր Մեծապատուութիւնը իմ կողմանէ փոխանորդ կը կարգեմ և կազաչեմ որ իմ կողմանէ բարեւելով այդ անձանց ըսէք որ իրենք գիշերային [թ]անձր խաւար մ'են և կուզեն մաքառիլ լուսի պէս յայտնի ճշմարտութեան դէմ : Տօքթէօր Պէրնար այս խորհրդաւոր բռները արտասանելէ յետոյ , ամենայն քաղաքավարութեամբ հրաման ուզեց մեկնելու : Բիզա պէյ կարմրեցաւ , դողդոջուն քայլերով մօտեցաւ Տօքթ. Աղասեանի և ներողութիւն խնդրեց իւր գործած յանդգնութեանը համար , վասն զի Տօքթ. Պէրնարի խօսքերէն զգաց որ մի զօրաւոր հարուած կերաւ իր բռնած սխալ ընթացքին համար :

Ժ

Յունվար ամսոյ սկիզբները, ձմեռնա-
յին սաստիկ երեկոյ մը, արեւելեան սառն
քամին կը փչէր սաստիկ գոռու մով: Աղ-
քատիկ բնակարանի մը մէկ սենեկին մէջ
որ ձիթային ճրագի աղօտ լուսովն լու-
սաւորուած էր, երկու մանկահասակ ա-
րարածներ, մին օրիորդ և միւսը փոքրիկ
պատանի, կրակարանին մօտ միմեանց
գրկուած պառկած էին պատառօտած
անկողնոյ մը մէջ: Ասոնցմէ քիչ հեռուն,
չափահաս մի օրիորդ եւս փսիաթի վրայ
նստած, դիչերապահ ուրուականներու
նման առանձին սառնութեամբ կը նայէր
երկու անմեղներուն և կը մտածէր իրենց
ցաւալի վիճակին վրայ: Սոքա Գէորդի
մեծ քոյրը և փոքրիկ եղբայրն էին, ո-
րոնք անտէր և անպաշտպան մնացած,
աղքատութեան սոսկալի ճիրաններուն
մատնուած էին. չափահաս օրիորդը տես-
նելով իրենց այս թշուառութիւն, վրձ-
ուած էր այլ եւս թողուլ այս սնտոի աշ-
խարհը և երթալ յաւիտենականութեան
գիրկը. նա տխուր մտայուղութեան մէջ

ինկած կը նայէր ճրագի ճաճանչներուն ,
Գիշերը բաւական անցել էր , աքաղաղ-
ներն ալ ցրտի սաստկութենէն անհան-
գիստ ըլլալով կէս գիշերուան մէջ հե-
տըզհետէ կը խօսէին : Մաքրուհի դող-
դողուն քայլերով ելաւ կանդնեցաւ , ամ-
բողջ մարմնով կը դողար ցրտէն , գնաց
կրակարանը խառնեց . մի քանի խոշոր
կայծեր տեսնուեցան , ունելիքով մէկ
կողմ դրաւ այդ կայծերը և ծրարի մէջէ
դուրս առաւ մէկ երկու կտոր ածուխ ,
դրաւ կրակարանին մէջ և յետոյ կայծերը
չարեց ածուխին դադաթը և սկսաւ իր
չնչովը սաստկացնել կրակը : Մի քանի
վայրկեան վերջը փոքրիկ սենեակը լեց-
ուեցաւ թանձր մառախլապատ մուխով .
ածուխը լաւ չէր շինուած , նրա ամբողջ
մասը փայտ էր մնացել շինուելու ատեն .
այդ թունաւոր մուխը կը կոչուի acide
carbonique (ածխային թթու) . շատ
անգամ մարդիկ երբ անձնասպանութեան
դիմեն , այդպէս ածուխի մուխով կը թու-
նաւորեն ինքզինքնին : Մաքրուհի կրա-
կարանը առնելով իւր վերմակի մէջ ամ-
բողջ մարմնով ծածկուեցաւ որպէս զի

ածխային թթուէն դուրս չեւնէ և ա-
ւելի շուտ ներգործէ թոյնը . նա հազիւ
երկու վայրկեան կարող եղաւ դիմանա-
լու . դեռ ինքզինքը չէր կորսնցուցած ,
յանկարծ մտաբերեց որ եթէ անզգայ
վիճակի մէջ լինի , կրակարանէն վառուե-
լով ողջակէզ պիտի դառնայ , անմիջապէս
վերմակէն դուրս առաւ կրակարանը և մի
քանի րոպէ եւս հազիւ կարողացաւ բռ-
նել ինքզինքը , ինկաւ դետին անզգայ
վիճակի մէջ . նոյն ատեն նրա դէմքը ըս-
տացաւ ածուխի գոյն և բերնէն սկսաւ
հոսել հեղուկ մը որ ճիշտ կը նմանէր ա-
ճառի փրփուրի : Նրկու մանկահասակ
անմեղներն ալ ածխային թոյնի ներգոր-
ծութիւնն զգացած էին , նոքա սկսան
թապլտկել անկողնոյն մէջ . անշուշտ կը
զգային մեծ անհանգստութիւն , բայց
չէին կարող ոտքի վրայ ելնել և ոչ ալ
մի բառ արտասանել , վասն զի թոյնը
թմրեցուցած էր անոնց երակաց արիւնը
և սաստիկ նիհարցուցած էր մարմնոյ ջի-
ւերը :

Առաւօտեան արշալոյսը ծագել էր ար-
դէն . որբերու տան դրացիներէն մի բա-

րեսիրտ կին որ ամեն օր մի քանի անգամ
կուգար անոնց մօտ , այս առաւօտ դարձ-
եալ իւր սովորական այցելութիւնն ըրաւ
հարցնելու համար թէ սարսափելի ցուրտ
գիշերը ի՞նչպէս անցուցած են . նա պար-
տիզի դռնէն մտնելով եկաւ ներքնադու-
ռը բանալու , տեսաւ որ գոցուած էր
ներսէն . անբաղդներու պառկած սենեկի
պատուհանի ապակին զարկաւ , սպասեց
մի քանի վայրկեան որ դուռը բացուի .
անցաւ բաւական ատեն և նա կարծեց որ
չէին լսած ապակիին ձայնը , նա երկրորդ
անգամ զարկաւ պատուհանին աւելի ա-
մուր կերպով և բարձրաձայն աղաղակեց
որ դուռը բանան . բայց նոքա անդգայ
վիճակի մէջ տարածուեր էին փախաթին
վրայ : Նրացուհին դառնալով իր տունը
պատմեց եղելութիւնը իր երիտասարդ
որդւոյն որ անմիջապէս գնաց խորտա-
կեց դուռները , ներս մտաւ և սկսաւ
պաղ ջուր սրսիւլ մահուան վիճակի մէջ
գտնուող մանկանց երեսին , բոլորովին
բացաւ պատուհանները և դուռները , սե-
նեկին ապականած օդը մաքրելու համար .
դրացուհին շտապաւ գնաց մօտակայ դե-

ղարանը . այնտեղ բժիշկի չգտնուելով դե-
ղագործ Ռասիայէլ Նալեան այլ և այլ դե-
ղեր իր հետ առած վազեց եկաւ և հի-
ւանդներուն բաւական օգնեց . քիչ մը
վերջը քաղաքային բժիշկին ալ եկաւ և
վերջապէս յաջողեցան անմեղները մահ-
ուան վտանգէ ազատելու : Իւսկիւտարի
կառավարիչն լսելով անձամբ եկաւ տե-
ղեկանալու : Մաքրուհի որ կարծես թէ
երկար տարիներ անկողնոյ ծառայած էր ,
հազիւ կարող էր շարժիլ հնամաշ անկող-
նոյն մէջ . դէմքը դեղնած էր որպէս մեղ-
րամոմ և սաստիկ տկարութեամբ կար-
տասանէր խօսքերը :

Կառավարիչը հարցուց թէ ի՞նչպէս
տեղի ունեցաւ անձնաստիճանութեան փոք-
րը : Մաքրուհի պատմեց ամենայն ճշ-
դութեամբ . ըսաւ թէ պատճառն այն էր
որ իրենք յետին աստիճան աղքատու-
թեան մէջ ինկած էին և ոչ ոք կօղնէր
իրենց . անոր համար յուսահատած , ա-
ւելի լաւ համարած էր մեռնիլ քան թէ
չարաչար տանջուիլ : Կառավարիչն գը-
թալով որբերուն վրայ , փոքրիկ գումար
մը նուիրեց անոնց և յետոյ պաշտօնական

գրութիւն մը ուղղեց Նոր Թաղի Թաղական խորհրդին որ ուշագրութիւն դարձունեն այդ թշուառ որբերու վրայ և պարտք համարին իրենց հսկողութեան տակ առնել : Թաղական խորհուրդը կառավարչի առաջարկութիւնը ընդունեց և Սէլամիյէ թաղի Աղքատախնամ ընկերութիւնն ալ որոշեց ամիսը երեք մէճիտ տալ որբերուն :

Մաքրուհի անձնասպանութեան դիմելուն համար շատ զղջաց և ամաչեց . նա այնուհետեւ սկսաւ տունէն դուրս չելնել որպէս զի իր հասակակալից բարեկամուհիները տեսնելով չնախատեն զինքը ըսելով թէ՛ Հեռո՛ւ մեզնէ , դու որ քու անձիդ , քու կեանքիդ թշնամի ես , դու որ քու հողիդ ու մարմինդ չես սիրեր , կարելի է որ օր մը զմեզ ալ մոլորեցնես ու խորհուրդ տաս որ մենք ալ անձնասպան լինինք : Ահա այս երեւակայական մտածումները կը տանջէին զինքը , թէեւ ընդհակառակը նրա բարեկամուհիները կը սիրէին զինք , կը ցաւէին նրա անբաղդութեանը վրայ և կը փափաքէին տեսակցիլ իրեն հետ , մխիթա-

րել գինք և պէտք եղած օգնութիւններն ընել:

ԺԱ.

Մաքրուհւոյ անձնաստղանութեան դիմած օրէն անցած էր երեք տարի . այն եղելութենէն յետոյ բաւական երջանիկ էին . անոնց ապրուստի մասին ազգը անտարբեր չէր : Վերջապէս Մաքրուհին ամուսնացուցին մի երիտասարդի հետ որ իր դրացին էր . երբ Մաքրուհի անձնաստղանութեան դիմած էր , սորա օգնութեամբը ազատած էր մահուանէ . անշուշտ ընթերցողը կը յիշէ այն կիներ որ ամեն օր կայցելէր որբերը տեսնելու . երիտասարդը այն բարեսիրտ կնոջ հարազատ որդին էր : Գէորգ հարսանեկան հանդիսին ներկայ դանուելու համար , ընդհանուր դատախազէն հրաման խընդրուեցաւ որ երկու օրուան համար միայն թողու երաշխաւորութեան տակ առնելով . բայց նա մերժեց այս խնդիրքը :

Գէորգ բոլորովին առողջանալով և յիմարանոցէն ելնելով , դարձեալ կեդրոնա-

կան բանտը դրուած էր . երբ խմացաւ իր քրոջ ամուսնութիւնը , շատ ուրախացաւ , նա իր ցաւերուն ամենէն մեծը փարատեց . նա ամեն վայրկեան կը մտածէր անոր ապագային վրայ . շատ գոհ լինելով այդ լուրէն , սկսաւ օրհնել իր քրոջ պաշտպանները :

Մաքրուհւոյ ամուսնութենէն ամիս մը վերջը , երկու նորապսակներն գնացին կեդրոնական բանտը Գէորգի այցելութեան . բանտապետին հրամանով բերուեցաւ Գէորգը այցելութեան սրահը . այս անգամ չուներ շղթաներ , ո՛չ իր պարանոցի և ո՛չ ալ ոտիցը վրայ , վասն զի Սուլթան Համիտի աղերսագիր տուած էր որ իւր կեանքը շնորհէ . բարեսիրա... Սուլթանը անբաղդ երիտասարդին կեանքը շնորհած լինելով , 15 տարի բանտարկութեան դատապարտուած էր նա : Քոյր և եղբայր այն աղետալի օրէն ի վեր առաջին անգամ էր որ կը տեսնէին իրար . Մաքրուհի մի քանի անգամներ գնացած էր կեդրոնական բանտը իր եղբայրը տեսնելու , բայց անգութ բանտապետը չէր թողած : Գէորգ իր փոքրիկ քոյրը 5 տա-

րի առաջ թողած էր մի փոքրիկ օրիորդ .
խակ 5 տարի վերջը կը տեսնէ զնա ամուս-
նացեալ մի երիտասարդ կին : Արկու կա-
րօտեալներն գրկուեցան . Պէտրդ իր վըշ-
տակոծ ճակատը մի քանի բոսպէ հանգ-
չեցուց քրոջը կուրծքին վրայ . Մաքրուհի
ջերմ արտասուաց կաթիլները զգաց իր
սրտին վրայ և քոյր և եղբայր դառն հեծ-
կլտանքով բաժնուեցան : — Ա՛խ , ի՛նչ
քաղցր է սիրելի քրոջ մը դէմքը կրկին
անգամ տեսնել , ըսաւ Պէտրդ ցաւագին
ժպիտով մը . քու նայուածքդ , քու դէմ-
քըդ կը յիշեցնեն ինձ մեր մանկութեան
երջանիկ օրերը , մինչեւ հիմա իմ եղբայ-
րական սիրոյ զգացմունքս կը նիրհէր ,
խակ այժմ արթնցուցիր այն սէրը . գիշեր-
ները երազիս մէջ խաւար բանտիս խորե-
րէն քու քաղցրիկ ձայնդ կը լսէի , քու
սիրուն դէմքդ կը տեսնէի և այնպէս կա-
րօտս կառնէի : Այս խօսքերն ըսելով Պէ-
տրդ , իր քրոջ փափուկ ձեռքերը առ-
նելով իւր ձեռացը մէջ սկսաւ թրջել իր
արտասուքով :

Հանդարտէ՛ , սիրելի՛ եղբայրս , բաւա-
կան է որ մեր սիրտերը մօտ են իրարու .

համբերութիւն պէտք է միայն, պիտի գայ
օր մը որ իմ գգուանքները պիտի մոռ-
ցունեն քու վշտալից անցեալդ . յիշէ՛ ան-
գամ մը մեր անցուցած մանկութեան գե-
ղեցիկ օրերը, դարձեալ նոյնն ենք մենք
և դարձեալ պիտի վայելենք ընտանեկան
սէր և խաղաղութիւն : — Տա՛ր երկինք
որ շուտ հասնէր այդ ցանկալի օրը, պա-
տասխանեց դատապարտեալն : Բոպէական
լուութիւն մը տիրեց երկուքին մէջ և յե-
տոյ շարունակեց Քէօրգ . Ա՛հ, գիտցէք թէ
այժմ այստեղ որ ներկայ կը գտնուիք,
զմայլելի և հեշտ վայրկեան մ'է այդ ինձ
համար, որ երազի պէս պիտի անցնի .
ա՛լ թռան իմ մանկութեան և երջանկու-
թեան օրերը վաղանցուկ վերջալուսի նը-
ման . յիրաւի ես երբէք չէի յուսար որ
զիս իբրեւ եղբայր ճանաչելով այսօր պի-
տի այցելէք ինձ մխիթարելու համար, ես
կը կարծէի որ դուք յաւիտեան պիտի
ուրանաք զիս, նախատինք և անէծք պի-
տի թօթափէք իմ գլխուս, ըսելով թէ
Քէօրգ ալ եւս մեր եղբայրը չէ, Քէօրգ
հայրասպան եղեւնագործ մի է, վերջա-
պէս նա ատելի էակ մ'է : Այս ըսելէ յե-

տոյ նա դարձեալ ինկաւ անբացատրելի սրտայուզութեան մէջ և ձեռքերովը փակեց աչքերն ու սկսաւ հեծկլտալ :

Այս վայրկենին Պէորգի քեռայրը որ կը գտնուէր քիչ մը հեռու , լսելով այս սրտառուչ խօսքերը երիտասարդի բերնէն , մի քանի քայլ յառաջանալով նրա ըսաւ . Պէո՛րգ , դու հայրասպան ոճրագործ մը չես , դու թշուառ ընտանիքի մը ազատարարն եղար , գիտցի՛ր որ Աստուած ալ թողութիւն պիտի տայ այս յանցանացդ , դու չպիտի ժառանգես ոճրագործի անունը , մարդիկ զքեզ պիտի ճանաչեն արդարադատ բազուկ մը , անիրաւին իրաւունք , բարբարոսին մարդասիրութիւն ուսուցանող . հայրդ էր մեղաւորը և յանցաւորը . գիտցի՛ր որ ձեր ապագայ սերունդը մինչեւ յաւիտեան անէծքով և նախատինքով պիտի յիշէ նրա յիշատակը . դու մի ուսուցիչ ես որ կուսուցանես մարդոց որդեսիրութիւն , մարդասիրութիւն , արդարութիւն , և իրաւունք . Աստուած էր որ քու բազկացդ զօրութիւն տուաւ որ ամբարտաւան և բռնակալ հօր մը եղջիւրները խորտակես ու փշրես :

Այսպէս նոյն օրը մի քանի ժամ տեսակցելէ յետոյ, բանտապետը իմաց տուաւ որ հեռանան. երկու այցելուներն տրտում և տխուր ժպիտներով բաժնուեցան, խոստանալով որ դարձեալ պիտի գան տեսակցելու :

ԺԲ

Երկարատեւ ձմեռնային դառնաշունչ օրերէ յետոյ կուգան դարնան կենսաբեր և հրաշալի օրերը. ամբողջ բնութիւնը կը խայտայ անպատմելի քաղցրութեամբ, գիշերային թանձր խաւարին կը յաջորդէ առաւօտեան հեշտալի և պայծառ արշալոյսը. մարդոց կեանքի շրջանին մէջ ալ այսպէս օրերու և եղանակներու նման շատ մը փոփոխութիւններ կը լինին, լոյսը կը յաջորդէ խաւարին, լաւը կը յաջորդէ վատին :

Գարնան սկիզբները Ն. Պօլսոյ կեդրոնական բանտի ընդարձակ պարտիզին մէջ, գործաւորներու յատկացեալ պատառտած կիսամերկ հագուստով, բոբիկ ոտներով, մի երիտասարդ կաշխատէր հողագործութեամբ. նորա երեսի խորշոմ-

ներուն մէջ կը տեսնուէին արտասուաց
կաթիլներ : Օրն հեշտալի էր . մանիշա-
կագոյն պարզ երկնքէն դուրս ցոլացող
արեգակը մշտապէս կը թափէր իր լու-
սափայլ և կենսատու ճառագայթներն
երկրի բոլոր արարածոց վրայ . հրաշալի
բնութիւնը կը խայտար հիանալի քաղց-
րութեամբ , ամեն տեղ կը տիրէր հրա-
պուրիչ թարմութիւն , ամեն տեղ կը տի-
րէր անսպառ ուրախութիւն , միայն թէ
այդ պարտիզի մէջ եղող գործաւորները
ուրախ և զուարթ չէին . նոքա միշտ տը-
խուր , միշտ ապերժանիկ և թշուառ էին :
Մեր նկարագրած ակամայ աշխատող ե-
րիտասարդը Գէորգն էր : Նա ձմեռը
սաստիկ դժուարութեամբ անցուցած ա-
ռիւծի նման դուրս ելած էր որջէն , ա-
րեւու երես տեսնելու և մաքուր օդ շն-
չելու համար ընդունած էր այդ հոգի ու
մարմին մաշեցնող աշխատութիւնը : Ի-
րեն հետ կային քսանէ աւելի երիտա-
սարդներ որոց մէջ կը գտնուէին միայն
երկու հոգի մահմէտական դատապարտ-
եալներ , մնացածներն քրիստոնեայ էին :
Կեդրոնական բանտի պարտէզը ծաղ-

կեցնելու համար բանտարկեալները կաշ-
խատցնէին և ժամանակին համեմատ ամեն
տեսակ կանանչեղէններ առատապէս կը
մատակարարուէն . ամենէն լաւ տեսակ-
ները պաշտօնէից և փաշաներու ապա-
րանները կը շրկուէին , իսկ անպիտան
տեսակները բանտարկեալներու կը տըր-
ուէին : Այս թշուառները դատապարտ-
եալ էին գործելու միշտ , դարնան ըս-
կիզբէն մինչեւ աշնան վերջերը երբէք
հանգստութիւն չունէին . առանց վար-
ձատրութեան դառն աշխատութեան են-
թարկուած , երեկոյեան արեւու հետ կը
մտնէին իրենց օթեւանը և առաւօտուն
արշալուսի հետ դարձեալ կեննէին պար-
տիւին մէջ չարչարուելու . այս գործա-
ւորաց վրայ կը հսկէին մի քանի զինակիր
բանտասպաններ որոնք բարբարոսութեամբ
կը վարուէին անոնց հետ և չէին թողուր
վայրկեան մը հանգստանալ . նոքա կը
ցաննէին իրենց աշխատութեամբ , իսկ
ուրիշները կը հնձէին իրենց աշխատու-
թեան պտուղը . ահա այսպէս են Թրքաց
բոլոր գործերը , անոնք ստեղծուած են
ուրիշներու աշխատութեանց արդիւնքը

վայելել , ուրիշի ստացուածքը իրենց կոկորդը անցունել :

Յայտնի է արդէն որ Գէորգ 15 տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ . 1886 թուականին , Սուլթան Համիտի ծննդեան տօնին առթով , ինչպէս որ սովորութիւն կայ բանտարկելոց երկար տարիներէն զեղչ մ'ընելու , Գէորգի բանտարկութեան պայմանաժամէն ալ 3 տարի կարճացուցին . ըսել է թէ նա 12 տարի պիտի մնայ բանտին մէջ . մինչեւ հիմա ճիշդ 9 տարի է որ Գէորգ Կ. Պօլսոյ կեդրոնական բանտին մէջ կը հեծէ . ուրեմն երեք տարի եւս ունի . յուսալի է որ այդ երեք տարիէն ալ զեղչ մը լինի և մօտերս ելնէ բանտէն : Կը խնդրեմ ամենակարող Արարչէն որ իմ հայրասպան ընկերս ողջ և առողջ դուրս գալով այդ կառափնարանէ իրեն հետ անգամ մ'եւս տեսակցելու բարեբաղդութիւնն ունենամ , և եթէ առիթը բերէ , մտադիր եմ որ օր մը նրա Հայրասպանի Յիշատակարանէն հետաքրքրական եղելութիւններ քաղելով իր կեանքի վրայ , նուիրեմ զայնս իմ սիրելի և ընթերցասէր ազգայնոցս :

ԳԵՂԱՄ ՏԷՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆՑ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմէնիաի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով :

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՅ ԳԻՒՅԱԶՆՈՒՀԻ ՄԸ (սպառած) :

Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ (սպառած) :

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ (Հայաստանի ազատութեան ցանկացող մի Հայի մաղթանքներն և մտածումներն են Սաղմոսի սճով գրուած) . 40 սնթմ. :

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՅ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՅ (Պուլղար աղգին իբ ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած ջանքերի խիստ

հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է) 1 Ֆր. 50 սթիմ.

Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒՍՈՒՆԵՐԸ . —

(Հայաստանցիներէ թշուառութեան գլխաւոր աղբիւրներէն մին ելող պանդխտութեան դառն հետեւանքներէ մի քանին նկարագրուած են իրական կեանքէ առնուած այս փոքրիկ վէպի մէջ :) 1 Ֆրանգ 20 սանթիմ.

Զ. ԳԱՄԱՌՈՒ ՔԱՐԻՊԱ.—ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենն աւարտելուն . (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ որոնք իւր «Բանաստեղծութիւններ»ի հաւաքածոյին մէջ չեն գտնուիր, առանձինն տետրակով հրատարակուած են) : Այս տետրակէ որի շահը բարեգործական մի նպատակի յատկացած է, 50 հատը մէկ անգամէն գնողին կը տրուի 50 հատը 2 Ֆրանգ 50 սանթիմի, որ ըսել է հատը 5 սանթիմ կամ 10 փարա թրքական :

Է. ԼԻՆՁԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱ.
ՆՈՒՄ . — (Այս տետրակի մէջ ցոյց կը
տրուի թէ բռնաւորներն և ազգա-
մատնիչ Հայերի դատաստանը ի՞նչպէս
պէտք է տեսնուի այնպիսի երկիրներ
մէջ ուր օրինաւոր և արդարադատ կա-
ռավարութիւն չկայ :

Մէկ օրինակի դինն է 20 սանթիմ,
20 օրինակը 3 ֆրանգ և 50 սանթիմ :

— Բաճճի — ԿԱՅԾԵՐ Ա. Ե. Բ. Հատորներ.
(Ազգային առաջնակարգ վիպագիր
Րաֆֆիի այս գիրք կը ծանօ-
թացունէ ընթերցողը տաճկական և
պարսկական Հայաստանի գլխաւոր
տեղերին հետ, հետաքրքրաշարժ տե-
ղեկութիւններ կուտայ քուրդերի դա-
նազան ցեղերի և հայերի դրութեան,
վարքի և բարքի մասին : Նա ցոյց կը
տայ այն ծրագիր որին պէտք է հե-
տեւին Հայաստանի մէջ գործել ու .

ղողներն: Մի խօսքով, թէ՛ իբր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իբր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գանուի այս գիրք ամեն հայրենասէր Հայի տուն:)

Գին Ա. հատորին (թղթակազմ) 7 Քր.
Բ հատորին (թղթակազմ) 8 Քրանգ
և 50 սանթիմ: Երկու հատորներն միասին 15 Քրանգ:

— ԲաՖՖի. — ՍՍՄՈՒԷԼ (ԲաՖՖիի հրատարակած ազգային վէպերի վերջինն է այդ որի նիւթը առնուած է Դ գարի Հայերի կեանքէն և որ, բացի իւր ներշնչած ազատասիրական ըզգացումներէ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ այն ժամանակի Հայերի բարքերին, սովորութիւններին և այլնի վրայ:) 10 Քր.

— Ծերեց. — ԵՐԿՈՒՆՔ Թ. ԴԱՐՈՒ (Ազգային անուանի վիպասան Ծերենցի գրած այս գիրք ցոյց կուտայ թէ

մահմէտականներն թ գարին մէջ Հա-
յաստան արշաւելով ինչ բարբարոսու-
թիւններ կը գործէին այնտեղ, ինչ-
պէս և կը գործեն այժմ նոյն իսկ ժթ
գարին մէջ: Երկոխնի իբրեւ օրի-
նակ ցոյց կուտայ ազգային գործիչ-
ներին Սասունցի Յովնան անուն մէկը
որ ի զուր բարձր տեղերէ ազգային
փրկութեան ահնկալելէ յետոյ, վեր-
ջապէս ժողովրդին մէջ կը փնտռէ ա-
զատութեան ոյժը և անով կը յաջողի
մի քանի յաղթութիւններ տանիլ
թշնամիներին դէմ:) 3 Քր. և 50 սնթմ.

— Գամառ. Բաքիպա. — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. (Ազգային առաջնակարգ
բանաստեղծ Ռ. Պատկանեանցի ազա-
տաշունչ և հրահանգիչ բանաստեղ-
ծութիւններն կը պարունակէ. սկիզբն
գրուած է հեղինակին պատկերը) :
2 Քրգ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ

Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ

Ս ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԶԱՏՈՒԹԵԱՆ

« Հայրենասիրական Միութեան »
հրատարակած այս վարդապետարանի
մէջ համառօտ կերպով բացատրուած
է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ
ինչ իղձեր սէտք է ունենայ և ինչ
պարտքեր ունի կատարելու :

Գինն է 20 սանթիմ և կը ծախուի
Արմ.Նիաի խմբագրատունը : Մէկ ան-
գամէն 20 օրինակ գնողը կը վճարէ
Ֆրանգ և 50 սանթիմ միայն , փո-
խանակ 4 Ֆրանգի : Փետի ծախքը
կը վճարուի « Հայրենասիրական Միու-
թեան » կողմէն :



ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ . — Անուրանալի է

բնական սարիներուն մէջ ՊԱԼԵՆՅ Գրասան
ած ազնիւ ջանքերը օգտակար եւ ընտիր
ազգրներու թիւը հոխացնելու համար :
արժեքն ընդարձակութիւնը իրաւունք
եւ իրեն հրասարակել բուն փնտռուած
ները , գիտունի մանկավարժին հա-
կարութեան արժանի , ընծայել դպրոցնե-
ն ալնալիսի գրքեր՝ որոնք ուսման ծա-
լի մանուկներուն ալնալն մեծամեծ օ-
րհներ մատակարարեցին : Եւ արգոյ հա-
կարութիւնը գնահատելով այս ամէնը ,
լսահոլութեան եւ համակարութեան յայտնի
ապացոյցներով պատուեց այս Գրասուն՝ ո-
ր նշանաբանն է եւ միշտ պիտի ըլլայ
ընտիրութիւն , նշանապահութիւն , առթելով
անակարութիւն իր բազմաթիւ յանախորդ-
ունն :

